

№ 12 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1883

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

Տանօ գոզ	Սրինգ
Մանկական երգ (ոտանաւոր)	Ս. Գամսարեանց
Ամբոցի պատանէն սոսրոտուած (Անդերսէնից)	Լ. Մ—Ա.
Անտառ (բանաստեղծութիւն)	Գ. Բարխուդարեանց
Ոսկեհեր և Մսագօնդ (հէքեաթ) . .	Աւ. Ա.
Փայտաչէն երձիկ՝ սալտատիկ տուեր (շարունակութիւն և վերջ) Փոխադր.	Ն. Տէր Ա.եաիքեան և Լ. Մելիք-Ադամեան
Դաբբէն (բանաստեղծութիւն)	կ. կ. Մ.-Շահնազար.

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ.

Ինչպէս է որոշվում ցորուց անց ձիու տարիքը։ Մեղուների ախոյեանը։ Մինները, որպէս չարժոզ ոյժ։

ՍՅԼ ԵՒ ՍՅԼԻՔ

Դարվինի կենսագրութիւնը

Օրիորդ Հօուէլզ

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Հանելուկները (3 հատ)

Շուտասելուկ

Մանկական խազ (Թամբի և ջուխտակ Թամբի) . . Մելիք

Բերուս

Զմայն տուբ, ամ ծովակ (երգ նօտաներով) . . . . Բաֆֆի

Նախընթաց №-ի մէջ եղած հանելուկների բացատրութիւնը։

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

Մի տարի անցաւ։ Խառն լուրեր։

«ԱՂԲԻՒՐԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ։ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

Բացառած է «Աղբիւրի» առաջիկայ տարուայ բաժանորդագրութիւնը։ Կը հրատարակուի նոյն դիւքով, նոյն ուղղութիւնով, նոյն ծրագրով և նոյն աշխատակիցների մասնակցութիւնով։

Տարեկան բաժանորդագինը . . . . 3 ռուբլի է։

Կէս տարուանը . . . . . 2 ռուբլի է։

ԱՂԲԻՒՐ

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԵՔԱՆԵՐՔ

ԵԻ

ՊԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

№ 12

ՊԵԿՏԵՄԲԵՐ

ԹԻՖԼԻՍ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, 5
1883

ՏԱՆՈՒ ԳՈՊ

(Ճշգրիտ անցք)

արաճճի Ռուբէնը շատ քաղցրասէր էր։ Նրա մայրը թէև մրզեղէններն ամուր կողպած անդուխների մէջ էր պահում, բայց նա այնպիսի խորամանկութիւնով բաց էր անում նրանց, որ մայրը մնում էր զարմացած։ Ումեն տեսակ փականի մի հասարակ երկաթի կեռ ծայրով հմտութիւնով բաց էր անում և անդուխի քաղցրեղէնները վայելում։ Շատ անգամ, ի հարկէ, մայրը վրայ էր հասնում և մի լաւ թակելով կամ անէծքաչոր անելով դուսգըցում տանից։ Ծեծում էին սաստիկ, մայրը ջոկ, պառաւ նանը ջոկ, բայց ոչ ոք չէր կարողանում նրան այդ ճանապարհից յետ կանգնեցնել։ Պէտք է այս էլ ասած, որ մայրը—գլխաւորապէս պառաւ նանը—իրանց անխիղճ ծեծերի հետքերը թողել էին նրա ճակատի և մատների վրայ. այդ հետքերը փոքրիկ սպիներ էին։ Նրանք տեսնում էին, որ ձեռքով թաւկելով չեն կարո-

դանում թաղկանել տալ նրա գողու-
թիւնները՝ փայտով էին ծեծում և խփած
տեղերը արիւնլուայ անում: Մայրը միշտ
յետոյ փոշմանում էր և զգուշութիւնով փա-
թաթելով արիւնոտ վէրքը—նստեցնում էր
իր գոգում և սփոփելով ասում:

—Որ մօր աչքերը կուրանայ, ձեռնե-
րը չորանայ, բալայ Ջան, սուս կաց. ինչ
անեմ բարկացած էր սիրտս, չհամբերեցի...
Դու էլ խելօք կաց էլի, ինչ ես սիրտս
տեղ չէ՞ն անում: Ձեռք չե՞ս վերառնիլ
այդ գողութիւններից. և ուրիշ խօսքեր չը
գտնելով պինդ գրկում էր և մրգեր տալով
խաբում էր ու լռեցնում: Բայց անցնում էր
մի երկու օր թէ չէ, Ռուբէնը էլի սկսում
էր իր գողութիւնները, իսկ մայրը տես-
նելով՝ չէր համբերում; ծեծում էր անխնայ
և յետոյ կրկին փոշմանում...

Վերջում տեսնելով որ նրա հաւքը
չեն կարողանում գալ և ծեծից երբեմն Ռու-
բէնը հիւանդանում է, մի օրէնք դրին նը-
րա համար. այն է՝ Ռուբէնին միշտ քաղց-
րեղէն ուտեցնեն, որ այլ ևս գողութիւն չա-
նի: Բայց այս էլ անյաջող անցաւ, որովհե-
տև այնքան միրգ չէին տալիս, որ նա կշտա-
նար. տուածն էլ միայն ախորժակն էր բաց-
անում, ուրիշ ոչինչ...

Ռուբէնը դարձեալ իր սովորութեան փեշէն բռնեց։

Ներա ծնողները կարծելով այս բանը սուրբ Սարգսից է, ուխտ դրին՝ ամեն տարի նրա տօնին այնտեղ գնալ, մատաղ անել, որպէսզի խաչն իրանց որդուն ծուռ ճանապարհից հանէ։ Այդպէս էլ արին։ Երեք տարի չարաճճին խաչ էր գնում, քէֆ անում իրան համար, բայց դարձեալ ոչինչ չդուսեկաւ. նա միևոյն նոյնը, նոյն տանու դողը...

Մի անգամ էլ Ռուբէնը տուն մտնելով՝ ըստ իր սովորութեան, անդուկը բացեց և ընկուզի շիջոցներ (չուչխելա) հանելով այնչափ կերաւ, որ զզուեց։ Նանը վրահասաւ։ Սա մի քանի անգամ Ռուբէնի վրայ ծղրտաց, մի քանի անգամ էլ փամփէցը գլխին և յետոյ, որպէս պատիժ՝ հրելով ձգեց նկուղը։ Այդտեղ բաւականին մութ էր. բայց յետոյ Ռուբէնը ընտելանալով մթութեանը, կարողացաւ աչքի առնել իր շրջակայքը։ Նա տեսաւ, որ առաստաղից մի քանի երկար փայտի վրայով կախած են բանդաններ (կախաններ)։ Իսկոյն մի միտք յղացաւ նրա գլխում։ Ձորս ժամից աւելի կը լինէր, ինչ նա նկուզումն էր։ Ռուբէնը բաւականին քաղցել էր. հարկաւ մի բան պէտք է գտնէր ուտելու...

Եւ ահա խաղողի, խնձորի և տանձի բանդաղները հրապուրում են նրան . . .

—Բայց մի՞թէ պառաւ նանը չէր իմանում, որ այստեղ բանդաղներ կան և չեն կարող ազատուիլ իմ ձեռից, հարցրեց ինքնիրան Ռուբէնը:

—Չէ՛, պատասխանեց ինքն իր հարցմունքին. երևի մոռացել է:

Պատի վրայ ոտնատեղերը կային, Ռուբէնը սկսեց այդ ոտնատեղերով վերբարձրանալ: Թէև նա սկզբում ալկհաց վայրընկաւ և չկարողացաւ վերբարձրանալ, բայց յետոյ կամաց-կամաց ոտներն ամրացնելով հասաւ բանդաղներին: Ձեռքը մեկնեց խաղողի բանդաղին և բռնեց ամենաճայրի ճիթից (ողկոյզից): Բայց դժբախտաբար ողկոյզը պինդ լինելով չէր պոկվում: սկսեց ամուր քարշել: Շը՛ըմի . . . թափուեց դետնին բոլոր բանդաղները:

Ռուբէնը բոլոր մարմնով սոսկաց: Տեսնում է առաջը հինգ-վեց խաղողի բանդաղներ չորս են դառել—ոչնչացել՝ բարձրից ընկնելով. խնձորի, տանձի բանդաղները սաստիկ հասուն լինելով՝ նոյնպէս ջարդուել և փչացել էին: Ի՞նչ կարող էր անել խեղճը,—ոչինչ: Ռուբէնը վիզը ծռած, խ ե ղ ճ-խ ե ղ ճ նայելով արածի վրայ, սկսեց մի աղեխողորմ լաց: Այնպէս ա ղ ե-

ա ղ ե լաց էր լինում, որ լողլե սիրտը կը-տոր-կտոր կը լիներ . . . Լ՚ալիս էր և բառ-ձրը ձայնով «մա՚յր, մա՚յր» կանչում: Իսկ նանիի անունը չէր տալիս, որովհետև, եթե նա իմանար, սաղ-սաղ գետնումը կը դներ . . . Լ՚ալիս էր Ռուբէնը և զարհուրած նայում ջուր դառած բանդաղների վրայ . . . Սաստիկ սարսափից նրա սիրտն ուզում էր ճաքի . . . Խեղճն այնքան լաց եղաւ, որ ձայնն էլ կտրուեց, արցունքն էլ ցամաքեց . . . Վ՚երջապէս վհատուած սրտով ընկաւ գետնին և այնպէս թմրած մնաց . . .

Ուկեղեցիների զանգակները ղողանջում էին, երբ նա աթ-ափուեց: Ռուբէնը գլուխը բարձրացրեց և սկսեց ապուշ-ապուշ նայել գետնին փռուած բանդաղների վրայ, որ նրանց ձմեռուայ քաղցրեղէնն էր. սակայն նա փոչացրել էր մի բոպէում:

Մթնել էր, ոչինչ չէր երևում մթին նկուղում: Յանկարծ միւս սենեակում Ռուբէնի մօր ձայնը լսուեց, որնոր բարկացած ասում էր:

— Ի՞նչ անեմ ես այդ անխիղճ պատուի ձեռիցը որ չի ուզում խեղճ Ռուբէնիս հանել մթին նկուղից:

Նա գալիս էր դէպի նկուղը մի ճրագ ձեռին: Ռուբէնը թէև մի փոքր սրտապնդուեց լսելով մօր խօսքերը, բայց ինքն էլ

մեղաւոր ճանաչելով պառաւին՝ սկսեց դառնապէս լաց լինել, որ դրանով իր գանգատը յայտնի մօրը: Դուռը բացուեց թէ չէ, նրա սիրտը չհամբերեց՝ հեծկլտալով ընկաւ մօր ծնկներով:

—Ի՞նչ է, Ռուբէն ջան, ինչո՞ւ ես լալիս, հարցնում էր մայրը անդադար:

Բայց Ռուբէնը մի խօսք չէր կարողանում ասել. նրա լեզուն բոլորովին կապուել էր... Այնպէս էր հեկեկում, հեծկլտում, որ մարդու մազերը բիզ-բիզ էր կանգնում...

Տեսաւ մայրը բոլորը և հասկացաւ:

—Ո՛չինչ չկայ, Ռուբէն ջան, դու հո չես մեղաւորը, բոլորի պատճառն այն անհոգի պառաւն է, դու մի՛ լար:

Տեսնելով, որ լաց լինելը չի կարում Ռուբէնին դրկելով շարունակեց.

—Այդքան լաց կը լինի՞ն, Ռուբէն. աչքերդ ուռել կարմրել տակ են դարձել, ռանգ-մռունգդ թռել է, բալայ ջան, սուս կաց, մի՛ լար... քո մօր ոտը պէտք է կոտրուէր, որ այսօր տանից դուրս չէր եկել... Ըրի՛ խոտեմ տանեմ տուն. ա ա ա ո ւ ն ց տանիցը քեզ համար լաւ-լաւ չ ա ե ր եմ բերել... Սո՛ւս, Ռուբէն ջան, սո՛ւս կաց:

Բայց Ռուբէնը չէր կարողանում սուս կենալ: Մօր խօսքերն աւելի և աւելի էին

ներգործում նրա վրայ և նա չեզոքանում էր անդադար . . .

—Ըրի՛, որդի ջան, խոստեմ, աղաչում էր նրան մայրը. էլ այց մի՛ լինիր, ինչ ասեմ քեզ այստեղ գցողին, որ սիրտս հովանայ . . . բոլորը նա է, դու մեղաւոր չես: Դէ՛, բաւական է, Ռուբէն ջան, մի՛ լար . . . Ձայրը դ ա ն ի քո մայրը . . .

Դարձեալ Ռուբէնը չէր կարողանում իր լացը պահել: Խեղճն իր կեանքումն այդքան սաստիկ լաց չէր եղած . . . Նրա սրտի թելերը թուլացել էին . . .

Այդ դիշերուանից Ռուբէնը սաստիկ հիւանդացաւ և բաւականին երկար ժամանակ մնաց անկողնի մէջ:

Ձգիտեմ ինչու, բայց նա առողջանալուց ետը սաստիկ զղուանքով էր նայում բոլոր քաղցրեղէնների վրայ . . .

ՍՐԻՆԳ



ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳ

Երթա՛ք ամեն, շուտ արի՛
Փաթիլ ձիւնը չեղոդ բի՛,—
Որ ընկերանցով դուրս գանք
Չնի կոլոլակ խաղանք։

Դէ՛ խիստ ամեն, շո՛ւտ արի,
Սիրուն գարուն, նորոգուի,—
Որ ընկերանցով դուրս գանք
Կանաչ դաշտումը խաղանք։

Յնձաղին Փետրվարին,
Ըղցան, մանիշակ Մարտին,
Եւ ծնեփակ Ապրիլին
Գաղենք և զուարճանանք։

Այգիքը շինի՛ր նախշուն,
Կարմիր վարդով զարդարուն,—
Որ ընկերանցով դուրս գանք
Գաղենք և ուրախանանք։

Գարուն, տափերին թո՛ռ տուր,
Երև, արտերին բո՛յ տուր,—
Որ սոսին-սոսին անի,
Տեսնողի խելքը տանի։

Սիրուն գարուն, թող քո տեղ
Ամառ բերի ցորնի թեղ,
Հազար թաղարներ դուրս գան,
Ոչ պարներ ուրախանան։

Ամառ, շուտով բեր շոքեր,
Հասացրու ամեն մրգեր,—
Որ ընկերանոցով դուրս գանք
Ուտենք և ուրախանանք։

Յունիսին կանաչ վարունգ,
Յուլիսին զել ձմերուկ,
Օգոստոսին դեղձ քաղենք
Ուտենք և ուրախանանք։

Շուն, եկ մեզ հովացրու,
Տրող ամառին փախցրու,—
Որ ընկերանոցով դուրս գանք
Հովում մանգանք, զովանանք։

Լաւ խաղող Սեպտեմբերին,
Լաւ դինին Հոկտեմբերին,—
Որ ընկերանոցով դուրս գանք
Ուտենք, խմենք և խաղանք։

Ընցաւ աշուն շաղախառն,
Հասան օրեր ձիւնախառն,
Սարեր ծածկեց սիպտակ ձիւն
Ամենայն մարդ մնաւ տուն։

Ո՜հ, ինչ վատ է ձմեռ օր
Տանը նստել սգաւոր,—
Ուսումնարան եկ գնանք,
Կարդանք, որ լաւ մարդ գառնանք։

Ս. ԲԱՄԱԼԵԱՆՑ

ԱՄՐՈՑԻ ՊԱՏՆԷՇԻ ՍՏՈՐՈՏՈՒՄ

ՊԱՏԿԵՐ

(Անգլերէնի առաջնէրէց)

Ի գեղեցիկ օր է։ Ամրոցի պատնէշէից հեռու երևում է անսահման ծովը, որի չինչ մակերևոյթի վրայ բազմաթիւ նաւեր են շրջում, իսկ Ջունդի միւս կողմում՝ երերուն ծովի ալիքների վրայ՝ թռնաձքր մշուշի մէջ Նվեգիայի ծովեզերն է բարձրանում։ Պատնէշի եռևից պատի նման անտառ կայ կանգնած, որի հսյակապ ծառերի ճիւղերից թափվում են դեղին տերևները. այդ թառամած որբիկները տխրագին պտոյտ են գալիս օդում և ապա կամացուկ ընկնում գետնի վրայ։ Ներքև՝ պատնէշի ստորոտում պարտէզներով շրջապատուած տխրատեսիլ տներ են երևում, որոնց մէջ թէ նեղուածք է և թէ մռթը, բայց դրանից աւելի տխուր է այնտեղ—վանդակների եռևը՝ նեղ և խոնաւ բանտերում, ուր թշուառ բանտարկուածներն են նստած։...

Այդ խոնաւ բանտերի փոքր ու նեղլիկ լուսամուտից շտապով ներս է թափանցում մայր-մտնող արեգակի ճառագայթը, և երբ նրա լուսաւոր շուառիւղն ընկնում է տխուր բանտարկուածի գունատ երեսին՝ նրա հալումաշ եղած և չար շրթունքներն ակամայ ժպտում են... Նա մտաբերում է իր անհոգ մանկութեան օրերը, երբ իր նմանների հետ վազվզում էր հայրական գիւղի ընդարձակ փողոցներում, ուր ծայրէծայր թափանցած էին լինում ամառուան այրող արեգակի ճառագայթները. կամ մտաբերում է, թէ ինչպէս ծառ պէս

թռչում էին դէպի լայն դետը, որի մէջ նրանք չբըռնուած ձկների նման սիրում էին չփչփացնել ջրի երեսին, սկել և նորից բարձրանալ ու լողալ։ Նա կարծես հիմա էլ լսելիս լինի գետի խոխոջիւնը, կարծես նրա աչքին էլի նորից երևալիս լինին կենդանի ջրի երեսին արեգակի ճառագայթներից գոյացած զանազան գոյները, և հետզհետէ աւելանում է նրա երեսի վրայ անբմբըռնելի ժպիտը... Երբ յանկարծ մէկ թռչնիկ ճռուողեց...

Թևաւոր մանկիկը նստեց բանտի լուսամտի վանդակի վրայ և սկսեց իր պարզեղանակի քաղցր երգը դայլայլել. «Կվի-վիտ, կվի-վիտ...»։ Նա Հանգիստ օրօրվում է վանդակի վրայ, թևերն իրար քսում, մէկմէկու ետևից փետուրներ է պոկոտում իր փոքրիկ կրծքի վրայից — իրան մաքրում է, խաղցնում է մէջքը, վիզը, — ախուր բանտարկուածն սկսեց տենդային հայեացքով նայել թըռչնիկին, որնոր նրա մէջ զարթեցրեց իր անցեալ պատանեկութեան օրերը, որոնք լի էին փայլուն յոյսերով, հաստատուն անվեհերութիւնով. նրա առաջ տարածվում են՝ մայրենի կանաչ անտառը, բարձրագագաթ լեռները, իրանց պարտիզապատ տունը. նա տեսնում է իր բարի ծերունի մօրը, որի խորշոմած երեսի վրայից անպակաս է անվերջ հոգսն ու Հանգիստ ժպիտը, իսկ չորացած ձեռքերում բռնած ունի գուլպան, որից երբէք չէ բաժանվում։ — Բանտարկուածի սև թերթերունքների մէջ՝ գարնանային առաւօտեան ցօղի նման՝ արտասուքներ

երևացին, բայց քաղցը արտասուքները—նա սկսում է աւելի ուշիուշով նայել Թռչնիկի վրայ. նրա՝ մէկը մեսի վրայ դրած՝ ձեռքերը սառսռալով դողդողում են. խեղճը՝ ներքին յուզմունքից այլայլած, այլ ևս չէ նկատում իրան կաշկանդող զգուելի և դաժան շղթան, որնոր արգելք է լինում տարածելու իր բազուկները, որոնք մի ժամանակ ազատ էին . . . Նրա մտքերը նեղլիկ բանտի պատերից հեռու-հեռուն թռան, նրա սրտի մէջ յոյսը վերանորոգուեց, հաւատը զարթեց նրանում, նրա աչքերը սիրուց փայլեցին, մի ինչ որ տաք, ուրախալի բան՝ ինչպէս նորեկ գարնան վաղ առաւօտեան մեղմ ճառագայթ՝ թափանցեց նրա ներսը և նրա հոգու մէջ մի միտք ծնուեց, թէև անըմբռնելի, թէև մուխը, բայց և այնպէս այդ անյիշաչար միտքը նման էր արեգական տաք ճառագայթներին, սիրուն Թռչնիկի քաղցը ճռուողին, ամրոցի պատնէշի պատի տակ կանաչի մէջ թաքկացած զմրուխտի նման մանուշակների անտեսանելի բուրմունքին . . . Այս քաղցը մոռացութեան մէջ էր նա, երբ լսուեց հրացանաձիգների փողերի հաճելի ձայնը . . . Անսպասելի ձայներից ահաբեկուած՝ Թռչնիկը թռաւ հեռու, շատ բարձր. արեգական ճառագայթը մէկէն թռաւ՝ աչքից անհետանալով անհուն տարածութեան մէջ—բանտի մէջ կրկին խաւարը պատեց, բանտարկուածի սիրտը կրկին ստուերարկուեց, նրա հոգուն դարձեալ դատարկութիւն տիրեց։ Բայց ինչ էլ որ լինի, այնու ամենայնիւ արեգակը նրա վրայ էլ նայեց, Թռչնիկը նրա համար էլ երգեց . . .

Շարունակեցէք հնչել, դո՛ւք, որսորդական փողերի հրաշալի ձայներ . . . Շարունակեցէք հնչել աւելի պարզ, աւելի քաղցր և ցիրուցան արէք վշտի և միայնակութեան ուրուականները . . . Հնչեցէ՛ք, հնչեցէ՛ք. ո՞րպէս հրաշալի և քաղցր գիշեր է, ծովը մեղմիկ կերպով տատանում է իր հայելիի պէս հարթ մակերևոյթը և գորովագութ մօր նման քնքշօրէն նանիկ է ասում քնած ծովեզրին, մոխրագոյն տներին, խուլ բանտերին, մշուշապատ սխուր անտառին . . .

Փոխադր. Լ. Մ—Ա.

Ա Ն Տ Ա Ռ

(Treilich Zeeth)

Երբոր ճնշում է քո սիրտը մի վիշտ,
Մի վիշտ հոգեմաշ, ծանր ու յամառ,
Ապա մարդկանցից խուսափիր դու միշտ,
Ուղղիր քո գնացքը դէպի մութ անտառ։

Անտառն ու ժայռերն էլ են ընդունակ
Նոյնպէս բառերով վիշտ արտայայտել։
Չէ որ շատ անգամ մրրիկն ու կայծակ
Նոցա կուրծքն ու սիրտն են պատառոտել։

Նոքա մարդկանց պէս չեն խօսի քեզ հետ,
Որ լոկ բառերով տան մխիթարանք,
Այլ ցաւակցելով՝ քո գանգատներին
Չայնակից կը լինի նոցա արձագանք։

Գ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ

ՈՍԿԵՀԵՔ

ԵՒ

ՄՍԱԳՈՒՆԴ

(Հեքիաթ)

— Ո՛մեր պապին շատ եմ սիրում, նա շատ բարի է, այնպէս չէ՞, Նեկտար, ասում էր փոքրիկ Շուշանն իր հասակակից քրոջը։

— Ի՛նչպէս թէ, մի՛թէ մենակ դու ես սիրում, Շուշան. նրան ճանաչողները բոլորն էլ հայր են կանչում։ Անցեալ օրը չտեսա՞ր, երբ մեր բարի պապի անուանակոչութեան օրն էր, թէ ինչպէս բոլոր դրացիները հաւաքուեցան ու հերթով ամեն մինը նրա ձեռքը համբուրեց. ա՛խ, ինչքան երջանիկ օր էր այն օրը։ Մեր բարի պապը օրհնեց ամեն մինին ու ճակատները համբուրեց. մեռքդ չէ՞, Շուշանիկ, որ երբ մեր հայրիկին հարցրինք, թէ ինչո՞ւ ամենքը մեր պապին սիրում են, հայրիկս ասաց, նրա համար որ բարի է։ Եթէ ուրիշի պապն էլ բարի լինի՝ մենք նրան էլ կը սիրենք, այնպէս չէ՞, Շուշան։

— Ի հարկէ, Նեկտար, բայց գիտե՞ս որ մենք ուսումնարանից ուշանում ենք, երբ վերադառնանք, այն ժամանակ կը խնդրենք մեր պապին որ խոստացած հեքիաթը պատմէ։

— Այո՛, քոյրիկ, գնանք, որ չուշանանք ուսումնարանից։

—Երկու քոյրերը՝ իրանց դասական փոքրիկ պաշարը շալակած, անմիջապես պատրաստվում էին ուսումնարան գնալու, երբ նրանց մայրը հանդիպեց դռների մօտ.—Ո՞ւր գառնուկներս, նրանց արգելեց մայրը, ո՞ւր էք պատրաստվում, այսօր կիւրակի է՝ ուսումնարանը արձակուած է. ուրեմն այսօր դուք ազատ էք, երբ դասերդ լաւ սերտէք՝ թոյլ կը տամ մինչև երեկոյ պապի մօտ մնալու։

—Չէ, մայրիկ այսօր շաբաթ է, բացականչեց Շուշանը. վաղն է լինելու կիւրակի։

—Այո՛, որդիք, պատասխանեց մայրը. բայց այսօր մեր Լուսաւորիչ Հօր խոր վիրապից դուրս գալու օրն է, եկեղեցին ասն է պահում. մի՛թէ մոռացաք այդպէս շուտ, չէ՞ որ դեռ անցեալ օրն էր որ բարի պապը պատմեց ձեզ այդ նշանաւոր մեծ մարդու պատմութիւնը։

—Ո՛չ, ո՛չ, պատասխանեցին Շուշանը և Նեկտարը միասին, մենք չենք մոռանալ այնպէս լաւ պատմութիւնը, մինչև անգամ մեր այն ընկերներին էլ պատմեցինք, որոնք չգիտէին. բայց, մայրիկ, հարցրեց Նեկտարը—հայրիկն ո՞ւր գնաց։

—Ի՞նչպէս թէ ո՛ւր, չէ՞ որ կիւրակի օրերը նա միշտ եկեղեցի է գնում պատարագ լսելու, պատասխանեց մայրը. եթէ այսօր ցուրտ և ցեխ չլինէր ձեզ էլ կը տանէր։

—Երեխաներն ուրախ-ուրախ սկսեցին վազվզել, ոչ թէ նրա համար որ այն օրը կիւրակի էր և իրանք չար երեխաների պէս պէտք է փողոցները չսփչփէին, կամ չիմար խաղեր անէին, ո՛չ, այլ նրա համար որ այսօր երկար միջոց կունենային իրանց բարի պապի առակները, հէքիաթները և խրատները լսելու։ Ամեն մինն աշխատում էր իր դասը շուտով պատրաստել որ իրաւունք ունենար պապի մօտ վազելու։ Երբոր խելօք աղջկերքն իրանց դասերը պատրաստեցին, ահա այն ժամանակ մայրիկի իրաւունքով մտան

իրանց սիրելի պապի սենեակը։ Բարի պապն ինքն էլ էր սիրում իր քնքուշ թոռնելին, որովհետև նրանք խելացի էին. կանչեց իրան մօտ, նրանց կարմրիկ թշերը համբուրելուց եռքը, թոյլ տուեց որ նրանք էլ իր ձեռքը համբուրեն ու նստեցրուց իրան մօտ մինին մի կողմը միւսին էլ միւս կողմը։ Շուշանին ու Նեկտարին շատ սրտովն էին և մի տեսակ ինքնաբուսականութիւնով նայում էին մէկ մէկու թէ խօսքի հերթը սրին թողնելու են։ Նեկտարը առաջինը վստահութիւն ունեցաւ պապի վզովը փաթաթուելու, որի օրինակին հետևեց Շուշանը։—Պապի ջան, պապի, երեկուայ խոստացած հէքիաթը չես պատմիլ հիմա։

—Հա բարի պապի, կրկնեց և Շուշանը, մենք այսօր ազատ ենք, դասերս պատրաստել ենք, մինչև հայրիկի ժամից գալը դու պատմիր մեզ Ոսկեհերի և Մսագունդի պատմութիւնը, չէ՞ որ խոստացել ես։

—Ի հարկէ, գառնուկներս, երբ որ խոստացել եմ, կը կատարեմ. դուք էլ յայտնի բան է լուռ կը մնաք և մտերդ կը պահէք, պատասխանեց պապը։ Եւ երբ երեխաներն իրանց հաւանութիւնը տուին՝ պապն այսպէս սկսեց իր պատմութիւնը։

«Ժամանակով երկու քոյր են լինում ձեզ պէս, բայց ի՞նչ եմ ասում, նրանք ձեզ պէս չէին, որովհետև նրանից մինը՝ Ոսկին խելօք էր, խիստ խելօք, խօսք մտիկ անող և աշխատասէր, իսկ միւսը՝ չար, կամապաշտ և ծոյլ էր. նրա անունն էլ Ջաւահիր էր, որ կրճատել՝ Ջաւօ էին ասում։ Ոսկին իր հօր առաջին կնոջից էր, այդ պատճառով եանամայրը, որ Ջաւօի իսկական մայրն էր, ատելով ատում էր Ոսկիին, միշտ էլ ծեծում էր, տան գործը—աւելելը, լուանալը, աղբիւրից ջուր բերելը, աղբը թափելը և բոլոր մանրմունր աշխատութիւնները Ոսկեի վրայ էին բարձուած։ Ոսկին ինչպէս ասացի, ծոյլ

չէր, նա ուրախությունով այդ գործերը կատարում էր։ Նա մինչև անգամ սիրում էր իր եղամօրը, թեև գիտէր իր խորթ մայր լինելը. իսկ Հայրը հավասար կերպով սիրում էր թէ՛ Ոսկիին և թէ՛ Ջաւօին։ Մի օր Ոսկին երբ տանը ամեն գործ կատարել և փոքրիկ ուլիկներն ու գառներն առաջ խառնած տանում էր կանանչ դաշտերում արածացնելու (նրանք դիւզացի էին), աղբիւրի մօտ մի պառաւ, աղքատ կին պատահեց, որ լալիս էր։ Ոսկիի սիրտը լքցուեց. նա մտածեց, որ մի բանի կարօտութիւն ունի այդ աղորմելին, կամ մի ցաւ ունի, ուստի վազելով եկաւ պառաւի մօտ։ Պառաւը կոյր էր, բայց լսում էր. երբ ոտնաձայն լսեց, աւելի և աւելի բարձր ձայնով սկսեց լալ։—Ի՞նչ ցաւ ունիս, հարցրեց Ոսկին,—կարող եմ մի բանով օգնել քեզ ասայ ու գնայ և պառաւի ձեռքը համբուրեց։ Պառաւը մատով ցոյց տըւեց իր ոտքը և հասկացրեց որ փուշ է մտել, Ոսկին կռացաւ և մի րոպէում փուշը հանեց։ Խեղճ կնոջ մորմոքոցն անցաւ, ցաւը հանդարտուեց, բայց էլի հեծկլտում էր։ —Մի բան հարկաւոր է, հարցրեց աղջիկը։—Քաղցած եմ, պատասխանեց պառաւը։ Ոսկին հանեց ծոցից իր բաժին հացը և տուեց նրան։ Ուտելից վերջը պառաւն աղաչեց որ ջուր էլ տայ։ Ոսկին երկու բռի միջով ջուրն էլ խմացրեց. բայց պառաւն էլի բաց չէր թողնում Ոսկիի ձեռքը։—Էլի հարկաւոր եմ քեզ, հարցրեց Ոսկին։ —Հա, պատասխանեց պառաւը, թեև մեր տունը մօտ է, բայց աչքերս չէ չոկում ճանապարհը. վախենում եմ թէ ճանապարհից շեղուելով քարի կոյտերի վրայ կամ ձորերի մէջ ընկնիմ, այդ բլրի ստորոտումն է։ Աղջիկն իր գառները և ուլիկները հաւաքեց, որոնք մի քիչ հեռացել էին այդ խօսակցութեան ժամանակ, և պառաւի ձեռքից բռնած կամաց-կամաց իջան բլրի ստորոտը. երբ հասան մի փոքրիկ խրճթի՝ Ոսկին դուռը բաղխեց, բայց

պառաւն իր գրպանից հանելով բանալին ասաց.—Մի՛ աշխատիր, բարի աղջիկ, այս հիւղի տէրը մենակ ես եմ, բայց ներս մտնենք։ Երբ ներս գնացին, տան զարշահոտութիւնն աղջկայ երեսը զարկեց. աղտոտ, մուրթ, խոնաւ տան կահկարասիքը ցրուած սմեն կողմի վրայ. ոչ մի բան կարգին և մաքուր չկար։ Ոսկին խղճաց այս ողորմելիի բնակարանի համար, սկսեց մաքրել, սրբել, լուանալ և կանոնաւոր կերպով դարսել կարասիքը։ Պառաւին շատ դուրեկաւ աղջկայ բարեսիրտ վարմունքը, և խնդրեց որ գլուխն էլ քթուէ։ Ոսկին առանց տրտունջի այդ խընդիրքն էլ կատարեց՝ ջուր տաքցրեց և մաքուր լուաց պառաւի գլուխն ու խոնարհութիւն արաւ հրաժարուելու։ Պառաւը ձեռքից բռնեց.—Ես լաւութեանդ փոխարէն ոչինչ ունիմ հատուցանելու, ահա իմ օրհնութիւնս թող լինի քեզ վարձատրութիւն. և երկու ձեռները բարձրացնելով դրեց Ոսկիի գլխին ասելով.

Ես ժպիտը մի կարմիր վարդ,
Արտասուքդ մարգարիտ.
Կեանքումդ տեսնես ոչ լաց ու դարդ
Ոսկէ գանգուր գլխիդ թագ։

Մթնում էր. աղջիկը հաւաքեց իր հօտն ու կամաց-կամաց մօտենում էր իրանց տանը։ Այդ միջոցին Ջաւօն չար երեխաների հետ ցեխերի մէջ խաղում էր, տեսնելով Ոսկիին մի ցեխի կտոր նետեց վրան. իսկ Ոսկին համեստաբար ժպտալով (ժպտալիս մի փափուկ կարմիր վարդ ընկաւ թշից) ցեխի կտորը վայր ձգեց վրայից ու. շարունակեց իր ճանապարհը։ Ջաւօն իրան համար նախատինք համարելով՝ որ Ոսկին իրան ընկերակցութիւն չէ կամենում անել՝ վրավազեց բըզտկելու. բայց թաշկինակը Ոսկիի գլխից խլելուն պէս մազերը, որոնք թաշկինակի տակ ծածկուած էին, փռուե-

ցան վզի և երեսի վրայ. նրանք արևի պես փայլում էին և այնքան գեղեցիկ, որ Ջաւօն նախանձուեց և լալով վազեց մօր մօտ ու ցոյց տուեց Ոսկիին։ Մայրը հիացաւ այդ փառաւոր ոսկեգանգուրները տեսնելով. նա էլ նախանձուեց, թէ ինչու՞ համար իր աղջիկը չունենայ և Ոսկին ունենայ, սկսեց անդադար ծեծել և բարկանալ Ոսկիի վրայ, թէ ի՞նչ է արել նա որ մազերն այնքան գեղեցիկ գոյն են ստացել, այնպէս փառահեղ են։ Ոսկին ինքն էլ չգիտեր մինչև այդ ժամանակ. մօր անդադար ծեծին վերջ տալու համար պատմեց այդ օրուայ իր զբոսից անցկացածն ու պատաւի վերջի օրհնութիւնը։ Մայրը մտքում դրեց, որ երկրորդ օրն իր աղջկան ևս ղրկէ պատաւի մօտ։ Առաւօտը կարկանդակները պատրաստեց, ճուտ տապակեց և մի քանի հատ էլ մեղրահաց թխելով ղրկեց Ջաւօին այն աղբիւրի մօտ, որ տեղ Ոսկին հանդիպել էր պատաւին. հրամայեց որ պատաւի խօսքերը կատարէ, որ նա էլ Ոսկիի պէս ոսկեհեր լինի. իսկ Ոսկիին էլ հրամայեց որ գլուխը հին շորերով փաթաթէ և այդ օրը տանից դուրս չգայ, թել մանէ և դուլապայ գործէ։ Ոսկին հնազանդուեց մօրը հրամանին, ինչպէս և միշտ. իսկ Ջաւօն տարաւ գառները և ուլիկներն աղբիւրի մօտ։ Մի ժամ դեռ չէր անցել ինչ Ջաւօն գնացել էր, մեկ էլ բարկացած փնթփնթալով վերադարձաւ տուն։ Մայրն առաջ վազեց իր աղջկայ ոսկեգանգուրները տեսնելու, բայց երբ թաշկինակը վերառաւ Ջաւօի գլխից, ոսկեգանգուրի փոխանակ ճակատից մի ահագին մսագունդ կախընկաւ։

—Մսագո՛ւնդ. սոսկումով աղաղակեցին Շուշանը և Նեկտարը։

—Այո՛, մսագունդ, շարունակեց պապը; որ մինչև քթին էր հասնում. մայրը սոսկաց. բռնեց աղջկայ ձեռից և տարաւ ներս, որ պատմէ, թէ ինչ պատահեց։

Ջաւօն սկսեց պատմել.—Գնացի աղբիւրի մօտ, տեսայ մի գեշ պառաւ, որ լալիս էր, աղտոտ, վրան-գլուխը պատրատած, աչքերը քօռ. այնպէս որ փոշմանեցի երեսը նայելս. նստեցի մի քիչ հեռու, հացս բացի ու կերայ. երբոր կշտացայ, պառաւին տացի. ինչո՞ւ ես լաց լինում. ասաց քաղցած եմ, ասի ի՞նչ անեմ, հացս կերայ վերջացրի. յետոյ ասաց, ծարաւ եմ. ասի, ջրի տման չունեմ. ասաց գլուխս քթուէ. գլուխը բացի ի՞նչ. այնպէս մեծ-մեծ կեղտաճիճուները կային, որ զզուեցի ու յետ քաշուեցի, խաբեցի թէ քթուեցի. ասաց ձեռքիցս բռնիր տուն տար. կոշտ չոր ձեռները բռնեցի, գնացինք տուն. մուրթ, թաց, խոնաւ օդը քթիս դիպաւ քթիս բռնեցի, մօտեցայ քովը, ասի՝—Հիմա ինձ օրհնէ որ գնամ։ Պաւթառն այս խօսքերն ասաց.

Ինչ որ ցանկաս, այն չստանաս,
Օրերդ անցնի սև ու սուգ.
Ոսկէ մաղերու փոխանակ
Ձակտէդ կախուի մսագունդ։

Երբոր Ջաւօն իր պատմութիւնը վերջացրեց, մայրը՝ վրդովուած այդ նախատինքից, յարձակուեց Ոսկիի վրայ և անգթօրէն սկսեց ծեծել։ Ոսկին ցաւից աղաղակում էր և գթութիւն խնդրում, բայց մայրը խիղճ չունէր, չկարողանալով արգելք դնել կրքին,—շուտ, ասաց, գնա հեռացիր տնից և մէկ էլ յետ դառնալու չհամարձակուես. իմացած կենաս որ վերադարձած օրդ է՛լ ապրելու չես։ Ոսկեհերը յուսահատուած մնաս բարով ասելով, իր հայրենական տանից սրտակոտոր հեռացաւ։

—Խե՛ղճ աղջիկ. անգո՛ւթ մայր, շշնջացին Շուշանն և Նեկտարը։

—Խեղճ աղջիկը, շարունակեց պապը, գնաց։ Հայրը ոչինչ խաբարութիւն չունէր այդ անցքից. առաջի իրու-

կուռնը նա Հանդից ուշ վերադառնալով, դադրած, ընկել քնել էր և առաւօտ վաղ կրկին իր գործին էր գնացել։ Երկրորդ օրը տուն մտնելուն պէս հարցրեց թէ՝ Ոսկին ո՞ւր է, չէ երևում։ Մայրը բարկացած առաջ եկաւ և սկսեց իր խորթ աղջկան վատայնել, սուտ զրպարտութիւններ բարդել՝ թէ միշտ չարութիւններ էր անում, գործի սէր չունէր, քրոջը հետ միշտ կռվում էր և այսօր էլ մի այնպիսի մեծ քար էր խփել քրոջը գլխին որ ահագին վէրք է բացուել (ցոյց տալով Ջաւօի ճակատը, որ թաշկինակով փաթաթել էր մսագունդը չերևալու համար). ես էլ երբոր մի քիչ նեղացայ և ասացի՝ սպասիր հայրդ վերադառնայ քո բոլոր արած չարութիւններդ պատմելու եմ... վախից չլինի թէ դու էլ ծեծես, հեռացաւ. տեսնես որտեղ է պահ մտել։ Մի՛ամիտ հայրն էլ՝ հաւատալով իր կնոջ խօսքերին, գուրգուրեց իր խորթ աղջկան ու գնաց քնելու։

Հիմա տեսնենք թէ ինչ եղաւ Ոսկեհերը։ Նա մօրը վրէժխնդրութիւնից վախեցած հեռանում էր գիւղից. շատ գնաց քիչ գնաց չգիտենք. ինքն էլ չգիտեր իրան որտեղ գտնուիլը. ուժը սպառուած ընկաւ մի ծառի տակ։ Այդ ժամանակ նրա քնած, կամ լաւ է ասել ուշքը գնացած տեղից ոչ հեռու երկու ճանապարհորդներ էին անց կենում, նրանք թագաւորի պալատականներից էին. նրանց հեծած ձիերից և հագուստից էլ հասկացւում էր, որ նրանք մեծ մարդիկ են։ Ձիաններըը խրտնում են, հեծնողները ասպանդակները ուժով են խփում, բայց նրանք առաջ չեն գնում, մի տեսակ կասկածանքով վար իջան ձիերից. և ինչ են տեսնում... ուշաթափուած Ոսկեհերին։ Ճանապարհորդները հիացան տեսնելով քնողի գեղեցկութիւնը, որ բնական ունէր. իսկ ամենից աւելի հիացրեց նրանց մազերի արեւի պէս փայլիլը. սկսում են վիճել թէ իրանցից ո՞րը կին ուզի. երկար վիճելուց եաքը

նրանք վճռումեն որ իրանց թագաւորն աւելի արժանաւոր է այդպիսի չնաշխարհիկ կին ունենալու։ Երբ Ոսկեհերին տարան թագաւորի մօտ, նա շնորհակալ եղաւ և առատօրէն վարձատրեց իր պալատականներին այդ անգին ընծայի համար և Ոսկեհերին իրան թագուհի ընտրեց։ Հիմա էլ պատմում են, որ նրա ծիծաղած ժամանակը թարմ կարմիր վարդեր են թափվում թշերից, իսկ լաց եղած ժամանակը՝ մարգարիտ։ Բայց թագուհի լինելից յետոյ, երբէք չպատահեց նրան լաց լինել, որովհետև նա միշտ բարի էր և այնպէս էլ մնաց. նրան սիրում էին թէ թագաւորը, թէ բոլոր պալատականները և թէ ժողովուրդը. նա աղքատներին ողորմութիւն էր բաշխում, հիւանդներին այցելում էր։ մեկ խօսքով՝ իր ձեռքից եկած լաւութիւնները չէր խնայում ոչ մեկից. այդ պատճառով Ոսկեհերը միշտ գոհ էր իր բախտից և տեղիք չունէը լալու։ Նրա միակ ցաւն իր հօրից, մօրից և քրոջից հեռու լինելն էր, որոնց յետոյ բերել տուեց իր պալատը, չյիշելով անցած գնացածները. բայց դժբախտ Ջաւօն՝ չդիմանալով խայտառակ մահացդի համար կրած ծաղրերին, դեռ Ոսկեհերի հրաւէրը չստացած կնքել էր իր մահկանացուն»։

Այստեղ պապը վերջ տուեց իր պատմութեանը։ Շուշանը և Նեկտարը, որոնք ուշադրութիւնով մտիկ էին անում, աւարտելուց յետոյ տխրութիւնով բացականչեցին.—Խե՛ղճ Ջաւօ, դու էլ հօ կարող էիր բարի լինել. ինչու չեղար բարի, որ դու էլ արժանանայիր Ոսկեհերի բախտին։

Ա.Ի. Ա.Ս.

ՓԱՅՏԱՇԷՆ ԽՐԱԹԻՅ

ՍՊԻՏԱԿ ՏՈՒՆՔ

(Շարունակութիւն)

XX

Հարֆիլդն իր ուսման առաջին ընթացքի վերջում թողնելով Այլմեան ինստիտուտի դռնապանութիւնը՝ կրտսեր ուսուցչի պաշտօն ստացաւ անգլիացիների պատմութեան, գրականութեան և հին լեզուների բաժնում։ Այսպէս՝ նա միևնոյն ժամանակ էր և՛ ուսանող, և՛ դասատու, և՛ հիւան։ Նրա մուրճի թղթղկոցին և հարթչի ճրզճրզոցին շուտով ընտելացան թէ ընկերները և թէ քաղաքացիք։ Ուսանողները՝ լսարանից դուրս գալիս՝ յաճախ տեսնում էին Ջէմսին ինստիտուտից մօտիկ կառուցանուող մեծ տան տանիքի վրայ աշխատելիս և մի առանձին յարդանքով խօսում իրար հետ այդ նշանաւոր աղքատ երիտասարդի մասին, որի համար ամենամեծ լաւականութիւնը աշխատելն էր։

Հիւանդութիւնից Հարֆիլդը լաւ արդիւնք էր ստանում. նա դրանով ոչ միայն կարողանում էր կացարանի, ճաշի համար վճարել և իր բոլոր միւս ծախսերը ծածկել, այլ և նա կարողացաւ հարկաւոր գումարը ձեռք բերել կօլէջին վճարելու իր ուսման համար։

Չնայելով որ Հարֆիլդը գործերով ծանրաբեռնուած էր, բայց և այնպէս նա էլի ժամանակ էր գտնում կրօնական և քաղաքական ժողովներին մասնակցելու, ամեն տեղ նա ճառեր էր արտասանում, և իր աղդու պերճախօսութիւնով լսողներին գրաւում։ Այլմի քահանաներից մինը՝ հայր Բենտլէյը սերտ մտերմութիւն հաստատեց ուսանող-քարոզչի հետ, բայց քահանային յուզմունք

էր պատճառում մի քիչ այն հանգամանքը, որ Հարֆիլդն աւելի սիրով քաղաքականութեան մասին էր խօսում քան թէ կրօնի։

Մի անգամ այսպիսի մի դէպք պատահեց. Հարֆիլդը հայր Բենտլէյի հետ եկեղեցու դասում կանգնած էր, եկան կանչեցին նրան որ գնայ ճառախօսի մի նշանաւոր քաղաքական ժողովում՝ այնտեղ «հռետոր» չգտնուելու պատճառով։ Չէմին իմանալուն պէս եկեղեցուց դուրս եկաւ։

«Չէմս, մի՛ գնար այնտեղ», ուզում էր աղաղակել յուզուած ծերունի՝ քահանան Հարֆիլդի եաքից, բայց մի րոպէ մտածելուց յետոյ նա ճարահատուած ձեռքը շարժեց ասելով ինքն իրան. «Սակայն, Աստուած իրան հետ, թող գնայ. ես գիտեմ որ, վաղ թէ ուշ, այս երիտասարդը Մթացեալ—Նահանգների նախագահ է դառնալու։

Պէտք է ասած՝ որ Այրամի համօրէն գիտութիւնների ինստիտուտում եղած երկրորդ տարին Հարֆիլդի կեանքի համար շատ մեծ նշանակութիւն ունեցաւ։ Բացի այն որ աւելի ու աւելի զարգացաւ նրանում հռետորութեան տաղանդը, այլ և նրա քաղաքական համոզմունքները նշանաւոր կերպով ամրացան ու կոկուեցան։ «Անտառների որդին»՝ մտաւորապէս և բարոյապէս զարգանալով՝ աննշմարելի կերպով պատրաստում էր իրան ապագայ մեծ կոչումի համար։

Չէմսը շարունակում էր հին լեզուների դասախօսութիւնը։ Մի անգամ ինչպէս եղաւ նրա ուրախութիւնն ու զարմացումը, երբ յունարէնի դասի ժամանակ նա իր լսարանում նստած տեսաւ Չեստէրեան դպրանոցի երբեմն ուսանողուհի օրիորդ Լուկրէցիա Րուգոլֆին։ Օրիորդը շատ լաւ էր սովորում, և, ինչ ասել կուզի, այդ բանով աւելի ևս դէպի իրան էր քաշում նրան։ Չէմսն ու օրիորդ Լուկրէցիան ազնիւ և անկեղծ սիրով սիրում էին իրար, ուստի՝ ուսման ընթացքի վերջում խօսք տուին իրարու հետ ամուսնանալ, միայն այն պայմանով՝ որ սպասեն մինչև իրանց լիակատար կրթութիւն ստանալը։

Մինչև այդ ժամանակ Չէմսն ընկերների մէջ վայրենիի պէս էր, իսկ դասարանից դուրս ամենայն կերպ աշխատում էր խոյստալ կանանց ընկերութիւնից։ Բայց

օրիորդ Սուդօլֆի ներկայութեան մէջօրին կարծես նա վերածնում էր։ Նա սկսեց յաճախել ուսանողների և ուսանողուհիների կազմած երեկոյեան խնջոյքներին. երբ նրանք գնում էին անտառ կամ լեռան վրայ զբօսնելու, Հարֆիլդն էլ էր գնում նրանց հետ. մէկ խօսքով՝ կատարելապէս ընկերութեան հոգին դարձաւ։ Նա վազում էր, թռչկոտում էր, երգում էր, զանազան ոտանաւորներ էր կարդում,—որոնցից շատը նա անգիր գիտէր, և միևնոյն ժամանակ երեխայի պէս սկսում էր ուրախանալ, երբ իրան անյայտ ցեղին պատկանող մի թռչուն էր տեսնում, կամ երբ աչքին էր ընկնում դարաւոր ծառերի գեղեցկութիւնը։

Չէմսն այն աստիճան ուրախ ու սրամիտ էր, որ նրա կենդանութիւնը համարեա և իրան շրջապատողների վրայ էլ էր անցնում, և, ուրոր նրա ձայնը լսվում էր, կարելի էր վաղօրօք գուշակել թէ այնտեղի մարդիկ ուրախ են։ Նոյն իսկ լոկ նրա ձեռքը սեղմելիս մարդ կարծես մի տեսակ ազնիւ, ջերմ բարեկամական բան էր զգում։ Հարֆիլդը յառաջադէմ էր թէ գիտութիւնների և թէ արհեստների մէջ և նրա ձեռնարկութիւնների մէջ ունեցած յառաջադիմութեան գլխաւոր պատճառը պէտք է համարել այն անփոփոխ կանոնը, որ նա իրան համար դրել էր՝ ե թ է մ ա ր դ մ ի գ ո ր ծ ս կ ս ու մ է, հ ա պ ա ու ր ե մ ն պ է տ ք է ա ն պ ա տ ճ ա ռ շ ա ր ու ն ա կ ի մ ի ն չ ի ն ր ա ա ւ ա ր տ ու մ ը։

Երբ բարձր դասատնից աշակերտները թողնելու օրը մօտեցաւ՝ ինստիտուտի վերատեսուչն ու ուսուցչապետները միմեանց ասում էին.

—Մեզ համար անհրաժեշտ է, որ Հարֆիլդը եաւ գայ Այրամ մեզ մօտ։ Միայն առ այժմս թող նա իր ուսման ընթացքն աւարտէ կօլէջում, իսկ յետոյ մենք նրան որևէ ամբիոն կառաջարկենք։ Այդ բանով մեր ուսումնարանը մեծ ժողովրդականութիւն կ՚ստանայ, որովհետև ուսանողներից սկսած մինչի քաղաքի վերջին բնակիչը, ամենքն էլ պաշտում են այդ մարդուն։

Եւ կարծես անկարելի էր չմտերմանալ ուսանող-ուսուցչի հետ։ Դասատանը, ուր երբեմն 90-ից աւելի լսողներ էին լինում նստած, Չէմսը կարողանում էր միա-

կերպ ամենքի հետաքրքրութիւնը շարժել. բայց նա մի առանձին հոգացողութիւն և ուշադրութիւն էր դարձնում դէպի այն աշակերտները, որոնք չէի գերազանցում իրանց ընդունակութիւնով։ Քանի մի խրախուսական խօսքեր, մի քաղցր ժպիտ երիտասարդ ուսուցչի համար որևէ արժէք չունէին, մինչդեռ նա դրանցով գրաւում էր աշակերտների սիրտը և նրանք էլ ամենայն ճիգ թափում էին, որ ապացուցանեն Ջէմսին՝ թէ իրանք հասկացան նրան։

«Ես երբէք չեմ կարող մոռանալ, պատմում է Այրամեան ինստիտուտում եղած աշակերտներից մինը, այն քաղցր տպաւորութիւնը, որ ունեցաւ ինձ վրայ Հարֆիլդի հմտութիւնը՝ կարողանալ հարկաւոր եղած ժամանակ փայփայել։ Մի օր՝ մեր տան և քաղցր հայրենիքիս կարօտը քաշելուց՝ սաստիկ տխուր էի. մտնում եմ ինստիտուտի լսարաններից մինը, ուր հանրահաշիւ էր դասախօսում բարձրահասակ, թիկնաւէտ և գանգրահեր ուսանողը։ Հէնց նա իմ երեսիս տխուր արտայայտութիւնը նկատեց թէ չէ, եկաւ մօտս, գրկեց ինձ երկու ձեռքով և քնքշօրէն կրծքին սեղմեց։ Այդ բանից զգացուած՝ մի րոպէում չքացաւ տխրութիւնս»։

Հարֆիլդը՝ տաքսիրտ ընութեան տէր լինելով, չափազանց զգայուն էր դէպի նրանց, որոնք բարի սիրտ ունէին։ Այսպէս օրինակ. Այրամեան ինստիտուտը թողնելու ժամանակ նա ամենից առաջ նամակներ ուղարկեց քանի մի բարձրագոյն դպրոցների վերատեսուչներին՝ իմանալու համար նրանց ուսումնարանի կանոնագրութիւնը, ուղղութիւնը և նախագիծը։ Նրանք ամենքն էլ թէև ուղարկեցին նրա ուզածը, բայց շատ չոր կերպով պատասխանեցին։ Նրա ուշադրութիւնը գրաւեց Նոր—Անգլիայի Ուիլեամս անունով կօլէջի վերատեսուչ դոկտոր Խոպկինսի կարճառօտ, բայց զգայուն սրտով գրած նամակը։ «Եթէ դուք մեզ մօտ գաք, գրում էր ծերունին, այն ժամանակ մեզ համար առանձին բաւականութիւն կը համարենք ձեզ համար անելու այն բոլորը, ինչ որ հնարաւոր է»։ Այս սրտանց գրած քանի մի խօսքերի մէջ կարծես լսելի էր մի ինչ որ եռանդագին անկեծութիւն։

—Վճռուած է, ես Ուիլեամս եմ գնում, յայտնեց Ջէմսն ընկերներին և ուսուցչապետներին տուն գնալիս մնաս-բարովի ժամանակ։

XXI

Ջէմին, Ուիլեամստօուն հասնելուն պէս՝ իսկոյն դոկտօր Խոպկինսին ներկայացաւ։ Տեսնելով իր առաջ կանգնած մի բարձրահասակ, ամօթխած, աղքատ-հագնուած, խիտ, շէկ մազերով և մեծ, բայց ճակատով երիտասարդ՝ և ուշադրութիւնով նայելով նրա բարի, մտախոհ երեսին, որի վրայ չէր նկատվում կրած զրկանքների ամենափոքր հետքն անգամ,—դոկտօր Խոպկինսն ամենևին չէր կարողանում ենթադրել, թէ իրան առաջ կանգնած է Չեստէրեան դալրանոցի այն ուսանողը, որի պերճախօս, խելօք նամակն այնպէս հետաքրքրել էր իրան։

—Երևում է, խեղճն աւելի իր կրթութեան մասին է հոգում, քան թէ իր արտաքինի մասին, մտածում էր ծերունին՝ լուռ նայելով մտնողին։

—Ես եմ Հարֆիլդը, Օգիօ նահանգից, ամաչելով արտասանեց ուսանողը։

Այդ մէկ խօսքն արդէն բաւական էր։ Խոպկինսն իր ձեռքը տուեց և սրտագին սեղմեց նրանը։ Այդ բարեկամական ձեռք սեղմելուց յանկարծ Ջէմսի սիրտը թեթևութիւն զգայ։ Նրան այնպէս թուաց թէ այդ ծանրագլուխ և արտայայտող ճակատով վսեմ վերատեսուչն իր ազգականն է։ Մինչև այդ ժամանակ Ջէմսը միայն կարողացել էր ջերմեռանդութիւնով Խոպկինսի աստուածաբանական դասախօսութիւնները կարդալ—և յանկարծ նոյնիսկ հեղինակին տեսնում է իր առաջ։

—Ի՛նչպէս ուրախ եմ, որ ես այստեղ ընկայ, մտածեց Ջէմսը։

Հարֆիլդը շատ հեշտութիւնով քննութիւն տուեց և իսկոյն ընդունուեց բարձրագոյն ընթացքի ստորին դասատուն։

—Եթէ դուք բոլոր արձակուրդների ժամանակ մընաք կօլէջում, նկատեց նրան վերատեսուչը քննութիւննից յետոյ, այն ժամանակ դուք կարող էք ուզածիդ պէս օգտուիլ ուսումնարանական գրադարանից, որը շատ հարուստ է գրքերով։

Հարկաւո՞ր է ասել, որ ստանալով այդ թոյլտուութիւնը, ինչպէս ուրախացաւ Հարֆիլդը. մինչև այդ ժամանակ նա ժամանակ չունէր, որ կարդար իր անձնական բաւականութեան համար, բայց այժմ նա կարող էր ամբողջ չորս շաբաթ գործ դնել այդ բանի համար . . .

Գրադարանի մեծութիւնը և կազմակերպութիւնն իրանց հոյակապութիւնով ապշեցրին նրան։ Առաջին հեղինակը, որին Ջէմսն ամբողջ օրեր էր նուիրում՝ Շէքսպիրն էր։ Նա այն աստիճան գրաւուեց նրանով, որ բերանացի սովորեց շատ տեսարաններ, մենախօսութիւններ, և սկսեց բարձրաձայն արտասանել այդ սովորածները։

Կօլէջի ուսանողները, մանաւանդ թէ նրանք, որոնք հարուստ էին և բարձր դասակարգից, առաջին անգամ աչքի-տակով և մի քիչ էլ տնազով էին մտիկտալիս անբարեձև և ցնցոտիներով հագնուած նորեկի վրայ։ Ամենից աւելի աչքի էր ընկնում նրա մաշուած հին ձևի ըզգեստը։ Այնպէս երևում էր թէ նրանից հեռու էին մնում։ Ջէմսը չէր կարող չնկատել այդ վարմունքը, բայց, ըստ իր սովորութեան, որ միշտ բարեսրտութիւնով և ներողամտաբար վարուել գիտէր դէպի ուրիշների թուլութիւնները՝ հէնց այս անգամին էլ այդ կերպ վարուեց։ Դեռ երկու շաբաթ անցած չէր լինի՝ ընկերներն իրանց կարծիքը փոխեցին նրա մասին։

—Սա կատարելապէս հմգի է, բացականչում էին նրանք։ Մանաւանդ ինչպէս էլ զօրեղ է։ Տեսաք ինչպէս լաւ էր խաղում, և ինչպէս լոքսում էր. ի՞նչպէս վազում է, նրան հասնիլ չի կարելի։ Բայց ի՞նչպէս էլ զարգացած է, կարծես թէ նա բոլոր գրքերը կուլ է տուել։ Խաչը գիտենայ, եղբայրներ, լաւ քաջ տղայ է։ Նա մեր ուսումնարանի համար փառաւոր գիւտ է։ Միայն մի բան ափսոս որ նա շատ չքաւոր է, սարսափելի վատ է

հագնուած։ Եթէ նրան օրինաւոր կերպով հագցնէին,— նրանից մի լաւ երիտասարդ կը դուսպար։

Ամենքն էլ սիրեցին Հարֆիլդին։ Առանց նրան ուսումնարանում ոչ մի բանի չէին ձեռնարկում, ամեն ինչի նա մասնակցում էր, մինչև անգամ իր ոտանաւորները նա սկսեց տպագրել «Պլրոցական Տեսութիւն» անունով լրագրի մէջ, որ հրատարակում էին կոլէջի ուսանողները։ Վարչութիւնը չէր կարողանում ըստ արժանոյն գովաբանել հեռու արևմտքից եկած շնորհալի երիտասարդին։ Բայց Խոպկինսն այնպէս մտերմացաւ նրա հետ, որ կարծես իր հարազատ որդին լինէր։

Անցաւ աշունը. վրահասան ձմեռուայ արձակուրդները։

—Հարֆիլդ, դուք ի՞նչ էք մտադրուել, ո՞նց պէտք է անցկացնէք այս երկու ամիսը, հարցրեց ընկերներից մինը։

—Ես կարծեմ լաւ կը լինի գեղագրութեան ուսումնարան բանալ, ուրախ պատասխանեց Ջէմսը։ Բայց միայն չգիտեմ, ինչ տեղ ընտրեմ։

—Գնացէք Վերմոնտի կողմերը, այնտեղ կրթուած և հարուստ մարդիկ շատ կան. ձեր ուսումնարանը յաջողութիւն կունենայ։

Հարֆիլդը հէնց այդպէս էլ արաւ. գնաց Նիւ-Եօրկի նահանգը, Վերմոնտի մօտ գեղագրութեան ուսումնարան բացեց, որից վնաս չկրեց։ Այնտեղ նա շատ բարեկամներ ճարեց, իսկ եկեղեցիներում իր արտասանած քարոզներով կատարելապէս մեծ անուն հանեց։

Տարիքով քահանաներից մինը սրտանց խորհուրդ էր տալիս նրան իր մօտ քարոզիչ մտնելու, խոստանալով մեծ ռոճիկ տալ. բայց Հարֆիլդը բոլորովին չընդունեց այդ ձեռնտու առաջարկութիւնը, ասելով որ ինքը միայն մի նպատակ ունի աչքի առաջ,—բարձրագոյն կրթութիւն ստանալ։

—Անկասկած Այրամեան ինստիտուտում երբէք այսպիսի մեծ ռոճիկ չեն տալ ինձ, ինչպէս ձեզ մօտ, ասաց Ջէմսը, և ես գիտեմ որ էլի ես պէտք է քանի մի տարի իմ պարտքերս վճարեմ. սակայն ես խօսք եմ տուել կոլէջում ընտրելիի դիպլօմ ստանալ, իսկ յետոյ Այրամում

ամբիոն ընդունել։ Այնտեղի ինստիտուտին ես շատ բանով պարտական եմ, և ես չէի ցանկանալ անշնորհակալ գտնուիլ։ Ես իմ մտադրութիւնս չեմ փոխելու։

Այդ արդէն Ջէմսի կողմից անշահախնդրութեան նշանաւոր յատկութիւն էր, որովհետև հէնց այդ ժամանակ նրա նիւթական դրութիւնը շատ աննախանձելի դրութեան մէջ էր։ Ջէմսին անհրաժեշտ էր օրինաւոր կերպով ոտքից մինչև գլուխ զուքուիլ, իսկ նա հատ կոպէկ չունէր։

Բարեբախտաբար նրան ազատեց այդ նեղ դրութիւնից մի բարեկամ, որնոր լաւ ծանօթ էր այն գիւղի ընտիր դերձակի հետ, ուր էր և Ջէմիի ուսումնարանը։

— Պարոն Խաակէլ, ասաց նա, մտնելով դերձակի խանութը,— խնդրեմ պարտքով մի ձեռք շոր կարէք մի երիտասարդ ուսանողի համար, որնոր մեր գիւղում գեղագրութեան ուսումնարան է բացել։ Շատ լաւ տղայ է. ճիշդ է թէև չքաւոր է, բայց չափազանց ազնիւ է։ Նա ուսանում է Ուիլեամս-Կոլէջում, այստեղ է եկել նա մի առ ժամանակ մնալու։

— Շատ լաւ կը լինի, ես պատրաստեմ, պատասխանեց դերձակը։

— Թէև ոչ միանուագ, բայց քիչ-քիչ նա ձեր պարտքը անպատճառ լիովին կը հատուցանէ։ Ես ձեզ խօսք եմ տալիս։

— Նրա անունն ինչ է։

— Ջէմս Հարֆիլդ, Օգիօից։

— Նրան ինձ մօտ ուղարկեցէք։

Մի քանի օրը Ջէմսն ինքը ներկայացաւ դերձակին և պարզապէս բացատրեց իր դրութիւնը։

— Պարտքիս հատուցման համար ժամանակ չեմ կարող նշանակել, ասաց Հարֆիլդը, բայց կը վճարեմ ձեզ մինչև ամենավերջին կոպէկը,— դրա համար ես ձեզ ազնիւ խօսք եմ տալիս։

— Լաւ, ասաց Խաակէլը, որին շատ դուրեկաւ չքաւոր-ուսանողի բայց և ազնիւ տեսքը, այս պարտքի մասին անհանգիստ մի լինիք, շարունակեցէք ըստ առաջնոյն ուսանիլ և երբ որ դուք աւելորդ փող կունենաք ժողոված— ահա այն ժամանակ ինձ էլ մտաբերեցէք։

Քանի մի օրից յետոյ Ջէմսին բերին մի ձեռք ընտիր հագուստ, հէնց այդ հագուստով էլ նա գնաց կօլէջ: Իսկ իր դերձակի պարտքը վճարեց նա ամենակարճ ժամանակամիջոցում:

Ջէմսն ամեն տարի իր մօրը տես էր գնում. նա այժմս ընակվում էր Սօլօնում՝ կրտսեր աղջկայ մօտ, որը նոյնպէս ամուսնացել էր: Կարելի է ենթադրել, թէ տիկին Հարֆիլդն ինչպէս երջանիկ էր զգում իրան, որ յաջողուեց գոնէ երկու շաբաթ էլ է իր որդու հետ միասին անցկացնել:

Ուիլեամս-Կօլէջի ուսանողները նեգրների սորկուԹիւնից ազատուԹեան ամենաեռանդուռ կողմնակիցներն էին համարվում: Բայց սորկուԹեան դէմ ամենից աւելի ձայն բարձրացնողը Ջէմսն էր: Քաղաքական ժողովներում իր ամեն մի հրապարակական ճառով հիացնում էր ունկնդիրներին ոչ միայն իր պերճախօսուԹիւնով, բայց և պատմական բազմաԹիւ տեղեկուԹիւններով, որովհետև նա միշտ ստիպուած էր վկայուԹիւններ առաջ բերել իր փաստերը հաստատելու համար:

—Ամերիկայի ամենահեռաւոր նահանգներումն անգամ Ջէմսի անունը լայտնի է, ասում էին ուսանողները նրան լսելիս, — սորկատէրերը խիստ նեղ տեղն են ընկնելու նրա ձեռքից . . .

Խիստ վերահասու լինելով իր վրայ հէնց ամեն բանի վերաբերմամբ, Հարֆիլդը չանկարծ սկսեց նկատել, որ իր ուղեղն սկսում է ոսոստիկ յոգնիլ չափազանց մտաւոր լարուԹիւնից: Նա արդէն առաջուայ պէս լաւ չէր կարողանում կշռադատել, կարդացածը մոռանում էր, մէկ խօսքով՝ կարծես Թէ ուղեղը Թուլացել էր: Նա չանհանգըստացաւ այդ մասին, այլ վճռեց մի առժամանակ իր պարապմունքների եղանակը փոխել՝ աւելի Թեթև կերակուր տալ ուղեղին: Առաջ նա իրան համար կանոն էր դրել վիպասանուԹիւնները չկարդալ, իսկ այժմ, ընդհակառակը, սկսեց գրանք կարդալ և ամեն ամիս կարդում էր Վալտէր Սկօտի, Կուպէրի, Դիկէնսի, Տեկկերէյի շարադրուԹիւններից միմի բան: Այդ միջոցով նա բոլորովին բժշկեց իրան և Թարմացրեց իր ուղեղը: ՎիպասանուԹիւնները կարդալիս նա նրանցից քաղուածքներ էր

անում, երբ նրան որևէ անձանօթ բան էր պատահում պատմուբեան, դիւցաբանուբեան կամ աշխարհագրուբեան վերաբերմամբ, և շնորհիւ այդ սիստեմի նա համօրէն գիտուբիւնների բազմաբիւ նորանոր տեսուբիւններ ձեռք բերեց։ Առհասարակ նա իրան կանոն էր դրել՝ ցանելուց առաջ ամենայն խնամքով հողը պատրաստել։

1856 թուականին Հարֆիլդը կոլէջից աւարտելու ժամանակ բնազանցուբեան մասին գրած շարադրուբեան համար ընտրելի աստիճան ստացաւ և, վերատեսչի, ուսուցչապետների և ուսանողների ընդհանուր վճռով՝ արժանացաւ հրապարակական ամենաբարձր, վարձատրուբեան։

XXII

Դեռ աւարտման հարցաքննուբիւնը չտուած՝ Այրամեան ինստիտուտի ուսումնական յանձնաժողովի անդամները Հարֆիլդին առաջարկեցին իրանց ուսումնարանի հին լեզուների և գրականուբեան ամբիոնը։ Այն ընդունելուբիւնը, որ ուսանողներն արին երիտասարդ ուսուցչապետին՝ ամենաքաջալերելի էր։ Չէմսն այժմ մի շատ պատուաւոր դերը ունէր։

—Իմ փառասիրուբեանը լիովին բաւականուբիւն է տուած, ասում էր այն ժամանակ իր բարեկամներից մինին։ Ես բարձրագոյն դպրոցի դիպլօմ ունիմ և Այրամում ամբիոն ստացայ։ Այժմ ես ինձ բոլորովին նուիրելու եմ ինստիտուտին, և այդ ուսումնարանը այն կէտին պիտի հասցնեմ, որ արևմտեան նահանգները նրանով պարծենան։

Ուսուցչապետի-տեղակալի պաշտօնում Հարֆիլդի ռոճիկը մեծ չէր՝ ընդամենը 1100 ռ. տարեկան. նա կարող էր շատ հեշտուբիւնով ուրիշ տեղ պաշտօն ստանալ երկու անգամ այդ ռոճիկից աւելի, բայց աշխարհիս երեսին ոչ մեկ գանձ չէր կարող նրան ստիպել ձեռք վերցնելու իր թանգագին դպրոցից, ուր նա իրան կատարելապէս բախտաւոր էր համարում։

Ինստիտուտում եղած հենց առաջին տարուայ վերջում նշանակեցին նրան մ ա ր մ ն ա մ ա ր զ ա կ ա ն խ ո ր հ ր դ ի ն ա խ ա գ ա հ, իսկ երկրորդ տարում—ա ւ ա գ ա ն ի, այսինքն ուսումնարանի վերատեսուչ:

Հարֆիլդը վերին աստիճանի ընդունակ էր երիտասարդներ ընտրելում, գուշակում էր նրանց ընդունակութիւնները և առաջ մղում: Նա այդ բանը հանաքուց «երեխաների ընտրութիւն» էր անուանում. և ճշմարիտ որ նա իր ուսումնարանի համար պատանիներ էր ընտրում. յաճախ նա սաստիկ վէճեր էր ունենում տգէտ ծնողների հետ, որոնք բաւական էին համարում մէկ կամ երկու տարուայ ուսումը, և պահանջում էին որ իրանց որդիքը տուն դառնան և կրկին գիւղատնտեսութիւնով պարապեն, բայց Ջէմսն ընդունակ աշակերտին երբէք չէր թողնում ուսումնարանից դուրս գալու: Միայն նա իր այդ կռիւն այնպէս զգուշութիւնով և խելացի կերպով էր վարում որ կուսիտ գաղթական-հայրերից ոչ մինն էլ է երբէք չէր վիրաւորվում. նա իր համոզմունքական պերճախօսութիւնով այնպէս էր ներգործում իր հակառակորդի վրայ, որ վերջինս նրա պարապման սենեակից դուրս էր գալիս բոլորովին հիացած նրա քաղաքավարութիւնից և, ինչ ասել կուզի, որդուն էլ թողնում էր ուսումնարանում:

Շնորհիւ իր անսովոր փափուկ բնաւորութեան և մարդավարութեան, որոնցով վարվում էր նա մարդերի հետ, Հարֆիլդն սկսեց քիչ-քիչ ընդհանուրի սէրն ու յարգանքը վայելել: Ամերիկայի Միացեալ-Նահանգները միմիայն նրան են պարտական, եթէ նրա նախագահութեան ժամանակ վարչութեան գլուխ էին կանգնած ազնիւ և շնորհալի մարդիկ: Նա շատերին առաջ տարաւ այն պատանիներից, որոնք Այրամեան ինստիտուտում ուսել էին իր ձեռքի տակ:

Ահա թէ ինչ է ասում իր բերանով այդ դպրոցի այժմեան վերատեսուչ պ. Լինսդալը, որնոր Հարֆիլդի ինստիտուտ կառավարած ժամանակուայ ամենաընդունակ ուսանողներից մինն էր:

—Մենք բոլորս էլ պաշտում էինք մեր երիտասարդ ուսուցչապետին, պատմում է նա. իմ բաժինս՝ բաւական էր միայն նրա հայեացքը, նրա մի քաղցր ժպիտը, որ ես ամբողջ օրը ոգևորուած լինէի:

—Պարոններ, յայտարարեց Նա մի անգամ ուսանողներիս, եկող շաբաթից ես ձեզ համար սկսելու եմ կարդալ պատմական դասախօսութիւնների մի ամբողջ շարք, բայց իմացած կացէք, որ միայն ձեր օգուտը չունիմ աչքիս առաջ՝ ես պատրաստուելով այդ դասախօսութիւնների համար՝ աննշմարելի կերպով ես ինքս էլ կը սովորեմ պատմութիւնը։

—Ախր նա այդ ինչպէս է անում, որ կարողանում է՝ դասատան զանգի վերջին հարուածի ձայնը դեռ նոր վերջացած՝ անմիջապէս ամբիոն բարձրանալ, հարցնում էին ուսանողները միմեանց։

—Աստուած է իմանում։ Միայն մի կենտ անգամ եմ տեսել, պատասխանեց ուսանողներից մէկը, որ նա սանդուխքի վրայ երևացել է զանգի վերջին հարուածից ուղիղ կէս րոպէ ուշ։

Եւ ճիշտ որ Հարֆիլդն իր պարտականութիւնն էր համարում ամենայն կերպ զգոյշ և ճիշդ լինել հէնց ամեն բանում. օրինակ՝ աղօթքի ժամանակ, դասախօսութիւնների ժամանակ, աշխատանքի մէջտեղին, մինչև անգամ և այն ժամանակ երբ խոստանում էր մէկին մի որևէ տեղ գնալու։ Յետոյ նա գիտէր սաստիկ շուտով աւարտել իւրաքանչիւր սկսած գործ, թէկուզ ինչքան էլ որ դժուար լինէր այդ գործը։ Իր աշակերտներին նա սովորեցնում էր հասկանալ և գնահատել հետևեալ երկու յատկութիւնների՝ զգուշութեան և ճշդութեան անհրաժեշտութիւնը։

Պէտք է այստեղ նկատած, որ Հարֆիլդը երբէք ուրիշներից չէր պահանջում մի բան՝ որն ինքը և չէր կարող կատարել։

Մի առաւօտ՝ ամենամօտ քաղաքից վերադարձին, ուր նա առաջին օրը հրապարակական դասախօսութիւն էր կարդացել՝ Հարֆիլդը մի րոպէ ուշացել էր։ Երիտասարդ ուսուցիչներից մինը նրա տեղը բռնել էր. երբ նա դասատուն մտաւ, աշակերտներից մինը ուսուցչի առաջարկած հարցին պատասխանում էր։ Հարֆիլդը թողեց որ ուսանողը խօսի և երբ նա վերջացրեց, անմիջապէս ժպտալով առաջարկեց նրան հետևեալ հարցը, որ կարծես թէ հէնց առաջին հարցն էլ ինքն էր տուել։

Երիտասարդ ուսուցիչը՝ հասկանալով վերատեսչի զուռնով հասկացնիլը՝ գլուխ տուեց և դասատնից դուսեկաւ։

Ուսանողները բարեկամաբար հրհռացին. նրանք էլ գլխիընկան, որ վերատեսուչը կամեցաւ դրանով կամայ հասկացնել իրանց դաստիարակին, որ նա շտապել էր և իրան թոյլ տուել կասկածելու իր ճշդութեան մասին։

1858 թուականի նոյեմբերի 11-ին Ջէմս Հարֆիլդն ամուսնացաւ օրիորդ Ռուդոլֆի հետ, և չահիլ կնոջ օգնութիւնով նա կարողացաւ իր ուսումնական աշխատութիւններից շատ բան աւարտել։ Շատ անգամ՝ երբ նա կամենում էր պատրաստուիլ որևէ գիտնական կամ հրապարակական դասախօսութեան համար՝ Ջէմսը կնոջն էր յանձնում հարկաւոր նիւթերը ժողովել և դասաւորել. և նա էլ՝ ամբողջ օրերով խորասուզուելով ինստիտուտի գրադարանի գրքերի մէջ՝ որոնում էր իրան ցոյց տուած հեղինակութիւնները։ Այրամի բնակիչների համար շատ սովորական բան էր տեսնելը՝ թէ ինչպես երիտասարդ վերատեսուչը գրքերը խըխըտած վազում էր գրադարանից յորդառատ անձրևի ժամանակ. այդ միջոցին նրա կողքից մի ուսանող գնում էր բացարած անձրևապահը բռնած։ Սաստիկ սէր ունէր դէպի գրքերը, որոնցից մի քանիսը նա կրկին անգամ կարդում էր հիացած։ «Թոմաս Բրունի դպրոցական օրերը» անունով գիրքը նրան զմայլեցրել էր, Մակօլէյը, Միլլը նոյնպէս նրա սիրած հեղինակներից էին։

—Նա կատարելապէս անգին գանձ էր և ոչ թէ դաստիարակ, ասում էր Հարֆիլդի մասին յարգելի քարոզիչ պ. Դարսին, որնոր Այրամում ուսանող էր եղած ։ Նա մեր ամենից անուն-անուն կանչում էր, ազատ ժամերին խաղում էր մեզ հետ ինչպէս ընկեր, բայց և այնպէս ոչոքի չէր թոյլտալիս մոռանալ իր առաջ։ Եթէ նա հարկաւոր էր համարում աշակերտներից միննումինիս նկատողութիւն անել կամ մինչև անգամ յանդիմանել, այն ժամանակ նա մեղաւորի վզից բռնում էր և, մօտեցնելով իրան՝ աննշմարելի կերպով շշնջում էր նրա ականջին ինչ որ պէտք էր։

XXIII

Հարֆիլդի պես քաջազօր հռետորը չէր կարող չգրաւուիլ քաղաքականութիւնով։ Օգիօ նահանգի առաջաւոր մարդիկ նրան իրանց ապագայ ընտրելին էին համարում և ամեն մի յարմար դէպքում նրան էին առաջ մղում։ Այնպէս երբ նա վերադարձաւ Այրամ, համարեա ժամանակ չտուին նրան ինստիտուտում կարգաւորուելու ինչպէս հարկն է, այլ ամեն կողմից առաջարկեցին ճառ արտասանել, մին այս հարցի վերաբերմամբ, մին մի ուրիշ հարցի։ Հասարակապետական կուսակցութիւնը, որ նեգրների ազատութեան գործի եռանդուն կողմնակիցն էր՝ նրան ամուր բռնել էր, չնայելով որ այն ժամանակ նրանք իրանց առաջնորդ ունէին ամենաշնորհալի մի անձնաւորութիւն — Ֆրիմանին, որ նոր նոյնպէս կորուկ էր, ինչպէս և Հարֆիլդը։

1859 թուականին իշխանութեան գլխաւոր ներկայացուցիչներն Ուիլեամս-Կոլէջում Հարֆիլդին մի չափազանց պատիւ արին, — նրան առաջարկեցին մի բոլորովին ուրիշ ուսումնարանի աշակերտների սւարտման ակտին հրապարակական ճառ արտասանել։ Հարֆիլդն ընդունեց այդ առաջարկութիւնը և կնոջ հետ ուղևորուեց դէպի Մասսաչուզետս նահանգը, ուր էր գլխաւոր քաղաք Ուիլեամստոունը։ Այս նրա կեանքում առաջին ճանապարհորդութիւնն էր, որ նա ազատ կամքով ձեռնարկեց։ Ջահիլ ամուսինները ս. Լաբրենտիոս գետի վրայով իջան մինչի Կվեբէկա, իսկ յետոյ անցան Նոր-Անգլիայի բոլոր նահանգների միջով. Հարֆիլդին ամեն տեղ անկեղծ ընդունելութիւնով էին ընդունում. բայց նա առանձնապէս զարմացաւ, երբ Հասաւ Ուիլեամստոունի մօտ։ Մենաւոնում նրան դիմաւորեց քաղաքի պատգամաւորութիւնը և, առաջին բարեւումից յետոյ՝ նահանգական սենատօրի ընտրելիի պաշտօն առաջարկեց նրան։

— Ի՞նչպէս, զարմացած բացականչեց Հարֆիլդը, չէ՞ որ ձեզ մօտ այդտեղը բռնած ունի պ. Պրէնտիսը։

— Նա մեռաւ յանկարծակի, պատասխանեցին նրան պատգամաւորները։

Պրէնտիսը՝ որ մի շատ հասակաւոր մարդ էր՝ մեծ ժողովրդականութիւն ունէր իր նահանգում. հասարակապետականների մեծ բազմութիւն պատրաստվում էր նրան մի ջազգային յանձնաժողովի նախագահ ընտրել. բայց երբ յանկարծակի մահը քանդեց նրանց նախագիծը, այն ժամանակ այդ կուսակցութեան հայեացքները դարձան դէպի Ալբամեան ինստիտուտի երիտասարդ վերատեսուչը։

—Այժմ դուք էք, Հարֆիլդ, մեր նահանգի հասարակապետական կուսակցութեան առաջին ընտրելին, ասում էին նրան պատգամաւորութեան անդամները։

—Անկեղծօրէն շնորհակալութիւն այդ պատուի համար, պատասխանեց Հարֆիլդը, ձեր այդ առաջարկութիւնն ինձ համար շատ հրապուրիչ է, սակայն չգիտեմ, կարող եմ ընդունել։

—Լոկ միայն ձեր անունը հերիք է, որ մենք կարողանանք ձայների բազմութիւն քաշել դէպի մեր կողմը։ Համարձակվում ենք յուսալ, թէ դուք չէք մերժելու։

—Բայց, պարոնները, ի՞նչ անեմ ես ապա ինստիտուտը, հօ չի կարելի միևնոյն ժամանակ կատարել և սենատօրի պարտականութիւն և ուսումնարանի վերատեսչի։

—Սենատում տարուայ մէջ պաշտօնական գործերի համար միայն քանի մի շաբաթ է պէտք գալիս։ Լաւ կշռեցէք այս հարցը, խօսեցէք ուսումնական ժողովի հետ և մի շաբաթից յետոյ իմացում տուէք մեզ, թէ ինչ էք վճռել։

Հարֆիլդը երևակայել անգամ չէր կարող, որ ուսումնական ժողովի և հոգաբարձական խորհրդարանի անդամները ցանկանային որ նա քուէարկուէր։ Այրամ վերադառնալով երբ հարցրեց նրանց կարծիքն այդ մասին՝ բոլորն էլ միաձայն խնդրեցին որ չհրաժարուի ընտրուելուց։

Ընտրութեան օրն եկաւ։ Հարֆիլդին կանչեցին Կոլումբուս, որպէսզի ինքն անձամբ ներկայ գտնուի իրան ասլատող յաղթանակին։ Քուէարկողներից մէկը շատ զարմացաւ, երբ տեսաւ երիտասարդ ընտրելիին, որին առաջարկում էին սենատօրութեան համար քուէարկել։

—Այդ ինչ բանի վրայ էք դուք, ծիծաղի համար է թէ ինչ է որ ուզում էք այդպէս երիտասարդին սենատօր ընտրել, դիմեց նա Հասարակապետական կուսակցութեան առաջնորդներից մինին։

—Նա չահիլ է միայն տեսքով, բայց ոչ խելքով, ընդդիմաբանեց նա։

—Սանենք թէ այդ այդպէս է, բայց նրա հասակում անկարելի է փորձառութիւն ունենալ քաղաքական գործերում։

—Բայց սպասեցէք մի քիչ և լսեցէք երբ նա կը խօսի՝ դուք իսկոյն ձեր կարծիքը կը փոխէք նրա մասին։

Ընտրութիւնների վերջում, ըստ սովորութեան, Հարֆիլդը ճառ արտասանեց, որը չափազանց նշանաւոր էր թէ պերճախօսութեան կողմից և թէ մտքերի պարզութեան։

—Սքանչելի է, բացականչեց քուէարկուն, որնոր կասկածել էր ընտրողների խոհեմութեան վրայ։ Այս մարդը—ոյժ է։

Հարֆիլդը ձայների մեծամասնութիւնով ընտրուեց և սենատօրի պաշտօնն ստանձնեց 1860 թուականի յունվար ամսին։ Նրա ընտրութիւնը սաստիկ խռովութիւն պատճառեց։ Հարաւայինն նահանգները սպառնում էին, որ եթէ ապագայ ընտրութիւնների ժամանակ հասարակապետական ընտրուի նախագահ՝ մերժելու են և քաղաքական պատերազմ հրատարակելու։ Հիւսիսայինն բոլոր նահանգներն էլ իրանց կողմից սպառազինուեցան անպատճառ պատերազմելու նեգրների ազատութեան համար։ Հարֆիլդը չնայելով իրան երիտասարդութեանը՝ հէնց այն մարդն էր, որ պէտք է սենատում նախագահէր մի այդպիսի փոթորկալից ժամանակ։ Նրա սենատի ընկերներից, ի միջի այլոց, կային երկու շնորհալի երիտասարդ մարդիկ, որոնցից մինը Կօկսն էր, վերջում գլխաւոր-նահանգապետ Օգիօ նահանգի և ատենապետը ներքին նախարարութեան։ Հարֆիլդն ու նա ընտրութիւնների ժամանակ մի կացարան վարձեցին և ապրում էին այնպէս ընկերաբար, ինչպէս եղբայրներ։ Նրա միւս ընկերն էլ Մօնրօն էր, որնոր Օբերլինեան կոլէջի ուսուցչապետն էր. այդ ուսումնարանը կառուցուած է ընդ-

հանուրի ազատութեան սկզբունքների առիթով։ Այս երեք երիտասարդ սենատօրները ձեռք-ձեռքի տուած առաջ էին գնում՝ հաստատուն կամքով դիմադրելով սորկութեան դէմ, որի համար և նրանց անուանեցին «արմատական վերանորոգիչներ»։

Հարփիլդի սենատօրութեան երկրորդ տարում, երբ Լինկօլնը նախագահ ընտրուեց, հարաւային նահանգները սպառնալեցան մերժելու, և ուրեմն քաղաքական պատերազմն անխուսափելի եղաւ։ Առիթը ներկայացաւ վճռելու ազգային չափազանց նշանաւոր հարցեր՝ «Հարկաւո՞ր է արդեօք Օգիօ նահանգին պատերազմի պատրաստութիւն տեսնել. արդեօք հարաւայիններն իրաւունք ունի՞ն մերժելու. կարելի՞ է արդեօք նրանց վերաբերմամբ սահմանադրական միջոցների ձեռնարկել. արդեօք հարկաւո՞ր է պատժել դաւաճաններին»։ Հարփիլդը գիշեր ցերեկ աշխատում էր այս չորս հարցերի մշակման համար։ Նա՝ շատ անգամ կէսգիշերից անց նստած ազգային գրադարանում՝ նորանոր նիւթեր էր ձեռք բերում։ Չարմանալի չէ ուրեմն երբ սպշած էին մնում նրա ճառերի ազդուութեան և ճշմարտութեան վրայ։ Նա չէր խնայում դաւաճաններին և վախկոտներին, սարսափելի կերպով հարուածում էր Բուականին, որ բաժանման ձգտող հարաւիններին կուսակցութեան պաշտպան էր. Կօբբիին, որ կողոպտեց ազգային գանձարանը. Փլօիդին, որնոր ազգային զինարանները յափշտակեց. Տուսիին, որ դիտմամբ նաւատորմի մի մասը հեռու տեղ ուղարկեց։

—Ընկճենք հայրենիքի բոլոր դաւաճաններին, բականչում էր Հարփիլդը։

Դեռ այդ ոչինչ. երբ յանձնաժողովն ինքն առաջարկեց միջոցութիւն անել հարաւայինների հետ հաշտութեան համար, Հարփիլդը սենատում հրապարակաւ յայտնեց, թէ սորկատէրերին երեստալ—միևնոյն է թէ դաւաճանել հայրենիքին։

—Թող կոնգռնալ իմ ձեռքը, ասում էր նա տագնապած, եթէ ես երբևիցէ սորոգրեմ սորկութեան կողմնակիցների հետ կապած համաձայնական թղթին։

Երբ կամեցան յանձնաժողովի առաջարկութիւնը քուէարկել՝ Հարֆիլդն ու էլի վեց սենատօրներ հրաժարուեցան ստորագրելու իրանց անուններն այդ ստորագրուցիչ համաձայնական թղթի տակ։

Հարֆիլդը խստիւ բողոքեց ամենայն տեսակ հաշտարարական միջոցների դէմ, նա այդ բանը վախկոտութիւն անուանեց և ուղղակի էլ յայտարարեց, որ ինքը հաւատարիմ կը մնայ իր դրօշակին, կը կռուի ընդհանուր մարդկային իրաւունքի համար։ Պատերազմի հարցը, վերջապէս, վճռուեց։

Գիշերն ուշ պառկելով քնելու՝ Հարֆիլդը դարձաւ դէպի իր սենեկակից Կօկսը.

—Կօկս, ասաց, նա, կարծեմ պատերազմն անխուսափելի է։

—Կասկածելու տեղիք չկայ, պատասխանեց Կօկսը։

—Ասել է մենք իմիտսին պէտք է զօրքին առաջնորդենք։

—Ի հարկէ, որովհետև եթէ այդպէս չանենք, մեզ վախկոտ կանուանեն։

—Դէ ուրեմն երդուինք հայրենիքի փրկութեան համար մեր անձը զոհել։

Եւ բարեկամները յուզուած սրտով տաք-տաք իրարու ձեռք սեղմեցին։

Սումտեր նահանգատի ռմբակոծութեան լուրը հասաւ Օգիո նահանգ համարեա այն միջոցին, երբ Լինկօլնին նախագահ հրատարակեցին 75 հազար զօրք բազկացած նոր բանակ կազմակերպելու համար։ Ամեն կողմից ծավահարուելով ընդունեցին հրապարակած կարգացած նախագահի նամակը։ Երբ փոխծորիկն անցաւ, Հարֆիլդը տեղից վերթռաւ և, մի կարճատօտ, եռանդուն ճառից յետոյ՝ այսպէս եզրափակեց իր խօսքը.

—Օգիո նահանգն իր կողմից հայրենիքի ազատութեան համար նուիրում է 20 հազարի չափ զինուոր և 4 միլիոն 50 հազար ռուբլի։

Ներկայ եղողների հիացմունքը չափ չկար։

Պատերազմական առաջին յանձնարարութիւնը որ տեղական նահանգապետը տուեց Հարֆիլդին կայանում էր նրանում, որ պէտք է Մ'իսուրի հասցնուէր 5 հազար

հրացան։ Նա այդ յանձնարարութիւնը շատ ճարպիկ կերպով կատարեց՝ հրացանները ջրով ուղարկելով՝ անվնաս հասցրեց Կոլումբուս։

Ամեն տեղ Հարֆիլդին յաջողում էր։ Նրա անձնական քաջութիւնը, նրա ամենքի հետ վարուել իմանալու ընտիր յատկութիւնը պատճառ դարձան նրա շուտով առաջանալուն։ 1862 թուականի Միդլ-Կրիկի տակ հիւսիսայինների տարած յաղթութիւնից յետոյ՝ չնայելով Հարֆիլդի երիտասարդութեանը, նրան յառաջադէմ գնդի զօրավար նշանակեցին։ Յետոյ Չիկկամօգի մօտ պատահած պատերազմում իր ցոյց տուած «պանծալի քաջութեան համար» 8-րդ աստիճանի զօրավարի կոչում ստացաւ։ Սպաների և զինուորների մէջ նրա ժողովրդականութիւնը շատ մեծ էր. հասարակապետութեան բանակի մէջ չկար մի մարդ, որ Ջէմս Հարֆիլդի անունը հպարտութիւնով չարտասանէր։

Երկու տարի և երեք ամիս պատերազմի դաշտի վրայ անցկացնելով՝ Հարֆիլդն իր հայրենակիցների կողմից էլի մի նոր ուշադրութեան արժանացաւ։ Օգիո նահանգը՝ Լինկօլն նախագահի յանկութեան համաձայն՝ ձայների մեծամասնութիւնով միջազգային յանձնաժողովի համար իրան ներկայացուցիչ ընտրեց երիտասարդ զօրավարին, և 1863 թուականի դեկտեմբերին նա առաջին անգամ իր աթոռը բռնեց «Սպիտակ Տանը»՝ ազգային շինութեան մէջ, ուր հաւաքվում են Միացեալ-Նահանգների բոլոր գաւառներից պատգամաւորները, ուր և բնակվում է նախագահը։

Չնայելով միջազգային յանձնաժողովի նիստերին մասնակցելը և սենատոր լինելը, այնուամենայնիւ Հարֆիլդն Ակրամեան ինստիտուտից չդուրս եկաւ, այլ, պատգամաւորների ժողով չեղած ամիսներում, նա շարունակեց իր դասախօսութիւնները այնտեղ։ Վերջին ժամանակներում նա առանձին եռանդով սկսեց պարապել ինստիտուտում նոր բացուած գեղագրութեան դասարանով։ Նրա առաջնորդութիւնով ուսանողները պարտաւորուած էին շարադրելու ամենայն տեսակ լուսանդակութիւնով՝—բարեկամական, ազգակցական, գործնական մաքուր գրած նամակները։ Երբ Հարֆիլդը գնաց

Կոլումբուս սենատի նիստերին ներկայ լինելու, ուսանողներն այդպիսի բազմաթիւ նամակներ էին ուղարկում։ Նա ամենայն ուշադրութիւնով կարդում էր այդ նամակները, ուղղում և յետ ուղարկում իրանց տէրերին։

Կարելի է ենթադրել թէ ինչպէս լաւացաւ նրանց ձեռքը, ինչպիսի սիրուն ոճերի հետ ընտելացաւ բոլոր ուսանող երիտասարդութիւնը և ինչպիսի ահագին օգուտ տուեց ուսուցման այդ եղանակն այն ուսանողներին, որոնք պէտք է վերջերում գործ ունենային վաճառականական գրասենեակներում կամ դրամանոյններում։ Տասնեօթը տարի շարունակ Օգիս Նահանգից Ջէմս Հարֆիլդը պատգամաւոր էր ընտրվում, և արդէն հէնց այդ ժամանակուանից նրա անունը մի առանձին հպարտութիւնով էին արտասանում իր բոլոր հայրենակիցները։ Սրանից յետոյ հասկանալի է թէ ինչու 1880 թուականին հասարակապետական կուսակցութիւնը միաձայն վճռեց հանգուցեալ Տերմէնի տեղ նրան ընտրել օրէնսդրական ժողովի անդամ։ Երբ Հարֆիլդի բարեկամները հաղորդեցին իրան այս մասին, նա պատասխանեց։

— Արէք, ինչ որ կամենում էք։ Եթէ ձեր կարծիքով այդ հարկաւոր է, ես չեմ ընդդիմանալու։

— Մենք ցանկանում ենք որ դուք էլ մեզ հետ գաք Կոլումբուս և ներկայ գտնուիք ընտրութիւնների ժամանակ, ասացին բարեկամները։

— Օ՜, ամենևին։ Մազի չափ անգամ չեմ աշխատիլ այդ յարգելի պաշտօնն ստանալու։ Ես իմ կեանքիս մէջ միայն մի անգամ ինձ համար տեղ խնդրեցի, այն է՝ Այրամեան ինստիտուտի դռնապանի պաշտօնը։ Եթէ ժողովուրդն ինձ է ցանկանում նա առանց ինձ էլ կընտրի։

Որչափ էլ խնդրեցին, բայց նա էլի իրան խօսքն առաջ տարաւ.

— Մի անգամ ասացի՝ որ ընտրութիւններին չեմ գայ Կոլումբուս,— ես իմ խօսքս չեմ փոխիլ։

Երբ Վաշինգտոնում Սպիտակ-Տան մէջ օրէնսդրական ժողովը բացեց իր նիստերը, ընդհանուրի տրամադրութիւնը չօգուտ Հարֆիլդի այնպէս նկատելի էր, որ միւս բոլոր ընտրելիները հրաժարուեցան քուէարկուելուց

և նա միաձայն հաւանութիւնով Միացեալ-Նահանգներուն սենատոր ընտրուեց։

Օրէնսդրական ժողովի անդամ ընտրուելուց հինգ ամիս յետոյ Միացեալ-Նահանգների նախագահի տեղը թափուր մնայ։

Հարֆիլդն անձամբ ներկայ էր ժողովին, ուր այդ մասին հարց բարձրացաւ։ Թէև նա իր դիրքով իրաւունք չուներ ընտրելի լինելու, սակայն ընդհանուրի ուշադրութիւնը դեպի իրան էր քաշում։ Հէնց որ վեր էր կենում քանի մի խօսք ասում, կամ երբ ընդմիջման միջոցին ժողովի ահագին դահլճում զբօսնում էր, ամենայն կողմից բարձրաձայն նրան էին դովում։ Ակներև էր որ նրա և ժողովրդի մէջ մի տեսակ գօրեղ, անքակտելի կապ կար։ Երեսունուչորսերորդ չյաջողուած քուէարկուողներից յետոյ 35-րդը՝ որ Հարֆիլդն էր՝ 50 ձայն դուսեկաւ։ Երբ այդ ծանուցուեց՝ դահլիճը թնդաց բազմութեան ուրախ և մոլեգին աղաղակներից։ Ամենքն էլ զգում էին որ հակառակ ընդունուած կանոնների, հասարակապետականներից ամենաժողովրդականը միաձայն նախագահ է ընտրուելու, իբրև ներկայացուցիչ ամենայն կուսակցութիւնների։ Մի ակնթարթում Օպիօի նահանգի պատգամաւորները վերառան իրանց դրօշակը (իւրաքանչիւր նահանգի ներկայացուցիչները՝ յանձնաժողովում առանձնակի նստած ժամանակ իրանց դրօշակն ունէին), առաջ տարան և բռնեցին նշանաւոր հայրենասէրի և արքունական գործիչի գլխի վրայ. նրանց հետևեցին և միւս ընտրողները իրանց դրօշակներով ու հաւաքուեցան յուզուած և զարմացած Հարֆիլդի շուրջը։ Դահլճի 700 քուէարկողների և վերին յարկի 15 հազար հանդիսականների ձայները միանալով՝ մի փոթորկալի, անդադարելի-ուրախ աղաղակ լսուեց. դրօշակները պարզեցին, քանի մի երաժշտական խմբեր միասին հնչեցին «Դրօշակի շուրջը ժողովուինք» հայրենասիրական հիմնը։ Հասարակութիւնը, կարծես ըստ նշանացի, ձայնակից եղաւ խմբովին նոյն խօսքերին և, միևնոյն միջոցին, փողոցից բազմաթիւ թնդանօթների միահամուռ ձայնը լսուեց։ Ամենքն էլ առանց բացատրութեան հասկացան, որ հայրենիքը Ջէմս Հարֆիլդին ար-

ժանի ճանաչեց բռնելու Միացեալ-Նահանգների նախագահի տեղը։

Այդպիսի մի օրինակ հազիւ թէ կրկնուի էլի մի որևէ քաղաքական ժողովուրդ։ Այդտեղ ամեն բան անկեղծօրէն էր, ամեն ինչ անխարդախ։ Ազգը պսակեց իրան հաւատարիմ որդուն և հպարտութիւնով իմացում տուեց ամբողջ աշխարհին։

Զօրավար Հարֆիլդի նախագահ ընտրուելու լուրը կայծակի արագութիւնով անցաւ երկրի մէկ ծայրից միւսը։ Զարութիւնը լռեց. չքացան գաղտնի խռովութիւնները. բոլոր կուսակցութիւնները դլուխ թեքեցին երիտասարդ ընտրելիի արժանիքի և ժողովրդականութեան առաջ։

Ուրեմն այսպէս՝ 1880 թուականի Նոյեմբեր 2-ին Հարֆիլդը Միացեալ-Նահանգների նախագահ դարձաւ։ Երեսուն՝ուվթ նահանգներից 20-ը յօգուտ նրա ձայն տըւեց, իսկ նրա հայրենի քաղաք Կոլումբուսը միաձայն նրան ընտրեց։ Հարֆիլդը՝ 1881 թուականի մարտի 4-ին, գնաց Սպիտակ-Տանը բնակուելու։

XXIV

Հարֆիլդը սաստիկ բարոյական կռիւ ունեցաւ ինքն իրան հետ այն օրը, երբ նա վճռեց թողնել քաղաքական ասպարէզը և զինուորական ծառայութիւն մտնել. այդ այն միջոցին էր, երբոր հարաւային նահանգները գլուխ էին բարձրացրել հիւսիսայինների դէմ։ Մանկութիւնից սովրած լինելով առանց աղօթքի չսկսել և ոչ մի լուրջ գործ, ամբողջ գիշերը նա խորասուզուած աւետարան էր կարդում, որը մայրն էր ընծայել նրան, և նրա մէջ որոնում էր իրան յուզող հարցի վճիռը՝ պատերազմ գնա՞լ, թէ չգնալ։ «Գնա՛, գնա՛, ձգնչում էր նրբան մի նեբքին ձայն, թող մօրդ, թող ընտանիքդ, գնա՛ հայրենիքիդ համար պատերազմելու, որովհետև ամենից առաջ կեանքդ նրան է պատկանում. ուրեմն իբրև մարդ կատարիր պարտականութիւնդ—ամեն բանից առաջ հայրենիքիդ օգնութեան հասիր, տպա թէ ուրիշ բանի վերայ մտածիր»։ Նա մինչև արշալոյս կարդաց ու մտածեց,

և վերջացրեց նրանով որ իր ամենալաւ բարեկամներից մեկին հետևեալ նամակը գրեց.

«Ես չափազանց շատ եմ սիրում մարքերիս շարժողութեան ընթացքին հետևիլ, երբոր ինձ ներկայանում է հիմնայատակ կործանել կեանքիս որևէ աւարտած նախագիծ և նրա տեղը կանգնեցնել մի բոլորովին նորը։ Բոլորը՝ ինչոր մինչև օրս ինձ թւում էր թէ հաստատ ու ամուր էր, անփոփոխելի էր — բոլորը, ասում եմ, յօդս ցնդեցան, և իմ ներքին աչքերովս ես տեսնում եմ թէ ինչպէս իմ առաջ բարձրանում է բոլորովին նոր հիմնարկած շինութիւնը։ Խորին ցաւակցութիւնով նայում եմ առաջինի աւերակներին։ Բայց եթէ նրա բեկորների վրայ՝ թեկուզ հենց պատերազմի դաշտում քանի մի տասնեակ հազար ամերիկացիների մահով՝ կարելի լինի ըստեղծել կեանքի նոր կարգ ու կանոն մի բոլորովին ազատ թագաւորութեան, այն ժամանակ ես իրաւունք չունիմ իմ զոհաբերութիւնս ծանր համարել։ Ես իմ կեանքիս չեմ ափսոսում, բայց մի բանից երկիւղ եմ կրում.— արդեօք շատ քիչ չէ՞ բերածս յօգուտ քաղցր հայրենիքիս»։

Երբ բանակատեղը հասաւ, ուր տեղաւորուած էր նրան յանձնած զօրաբաժինը՝ Հարֆիլդը հենց առաջին իսկ րոպէից հետևեց նոյն կանոնին, որին հետևում էր հիւանդութեան արհեստով պարապելիս, այն է՝ սկսեց իր ձեռնարկած գործի այրուբենից։ Ամենափոքր հասկացողութիւն անգամ չունենալով զինուորական կրթութեան և առհասարակ պատերազմական գիտութեան, նա մի առանձին տեսակ խազ մտածեց, որի օգնութիւնով առաջ ինքը սովորեց ամեն բան, ինչ որ հարկաւոր էր, իսկ յետոյ սկսեց սովորեցնել իր զօրքին։ Հարֆիլդն ինքնիրան ձեռքով հայի ծառ կտրեց, տաշեց, մի խումբ զինուորներ ու սպաներ շինեց և, սհագինատախտակի վրայ շարելով նրանց՝ ամենայն օր սկսեց զօրքերի զանազան տեսակ կրթութիւնով վարժուիլ,— մին պատերազմ տանելով, մին տանուլտալով։ Այդ միջոցով նա ամենակարճ ժամանակամիջոցում հասաւ այն բանին, որ կատարելապէս սովորեց զինուորական կրթութիւնը։ Այն ժամանակ նա սպաների համար դպրոց բացեց, ուր նրանք գալիս էին և բարձրաձայն կարդում զանազան պա-

տերազմական հեղինակութիւններ և վարժուում պատերազմական խաղերում։ Միշտ սովորելով և զինուորական կրթութիւնով սլարապելով, որ երբեմն 6-ից մինչի 8 ժամ էր տևում մի օրուայ մէջ, Հարվիլդն իր զօրաբանակն այն աստիճան կանոնաւորութեան հասցրեց, որ ուրիշ բանակների համար կատարելապէս մի ընտիր օրինակ եղաւ։

Զօրքի գլխաւոր հրամանատարից Հարվիլդին տրուած պատերազմական առաջին յանձարարութիւնը կայանում էր նրանում, որ նա պէտք է գաղտնի հաղորդակցութիւն գտնէր գնդապետ Կրէնորի մօտ գնալու և աշխատէր միանալ նրա հետ. թէև նրանց երկուսի զօրքը միացած՝ թշնամու ոյժի կէսն էլ չէին կազմում։ Դրա համար անհրաժեշտ էր Կրէնորին հեռագիրը հասցնելու համար գտնել մի այնպիսի յուսալի մարդ, որնոր ցանկանար շատով մեռնել, քան իր գաղտնիքը երևան հանել։ Կրէնոր գնդապետն իր զօրաբանակով Հարվիլդի բանակատեղից հարիւր մղոն հեռաւորութեան վրայ էր գտանվում. և բայի այդ հեռագիրը տանողը պէտք է անցնէր այն տեղերով, ուր ինսուրգենտներն (հարաւայինները) ու գուերիլեաններն (լեռնական աւազակներն) էին ընակըւած։ Հարվիլդը դիմեց 14-րդ Կենտուկեան գնդի հրամանատար Մ՝ուրին այս հարցով՝ թէ արդեօք նրա մօտ չկայ մի այնպիսի գաղտնապահ զինուոր, որնոր յանձնառնէր այդ վտանգաւոր ձեռնարկութիւնը ի կատար հանելու։

— Իմ գուցակումս այդպիսի մի մարդ կայ, պատասխանեց հրամանատար Մ՝ուրը մտածելով — այդ Զօն Զօրդօնն է, տուէք նրան հեռագիրը նա կը տանի։

Զօրդօնի եռևից ուղարկեցին։ Եկաւ մի շատ բարձրահասակ, թիկնաւէտ, չոր-չոր, սուլուլիկ գլխով մի երիտասարդ, որնոր խօսում էր համարեա անհասկանալի լեռնային բարբառով։ Նա ծնուել և մեծացել էր լեռներում, մանկութիւնից սովորել խիստ կեանքի և ամենայն տեսակ զրկանքների։ Այն շրջակայքը նրան լաւ ծանօթ էր. բայց չնայելով այդ բաներին — նա կատարելապէս երեխայ էր։ Զինուորական խորհրդի անդամները կատակած գնացին, թէ արդեօք նա կարող է մի գաղտնա-

պահ գինուորի պարտականութիւն կատարել։ Իսկ Հարֆիլդն իսկոյն ճանաչեց. նա հասկացաւ որ այդ կոպիտ, թերուս մարդը բոլորովին յուսալի երիտասարդ է։

—Դու ի՞նչու համար ես եկել պատերազմ, հարցրեց Հարֆիլդը նրան։

—Որպէս զի անձս զոհեմ հայրենիքիս փրկութեան համար, պատասխանեց Ջօնը,—Տէր Աստծու հետ առևտուր անել չի կարելի։ Եթէ Նրա սուրբ կամքը վճռել է, որ ես ընկնեմ, թող այդպէս էլ լինի, ես իրաւունք չունիմ տրտնջալու, մանաւանդ որ հայրենիքիս համար է որ պէտք է ընկնեմ։

—Կը նշանակէ դու այն մտքով ես եկել պատերազմը, որ կենդանի չվերադառնաս։

—Այո՛, պ. գնդապետ, հէնց այդ մտքով։

—Խօսք տալիս ես որ դու աւելի շուտով կընտրես մեռնել, քան թէ քեզ յանձնած հեռագիրն ուրիշին տալ։

—Պ. գնդապետ, խնդրում եմ չկասկածէք այդ մասին։

—Շատ լաւ, ես քեզ բոլորովին հաւատում եմ։

Հարֆիլդն իսկոյն հեռագիրը գրեց չինական ամենաբարակ թղթի վրայ, կոլոլեց շինեց գնդակ, արճճով պատեց և Ջօրդօնին տուեց գնդակի ձևով։ Յետոյ նրան մի քարաբինայով և մի զոյգ ատրճանակով սպառազինելով՝ զօրքի ուղեցած ամենաընտիր երիվարներից մինի վրայ նստեցրին։ Ջօրդօնը բանակատեղից ճանապարհ ընկաւ գիշերով, երբ արդէն լուսինը շրջելու վրայ էր. նրան հրամայուած էր ցերեկով թաք կենալ անտառների մէջ կամ մի յուսալի գաղթականի մօտ, իսկ ամբողջ գիշերներն առանց հանգստանալու առաջ գնալ։ Ձիշդ երկու օրուգիշերից յետոյ մօտ կէս գիշերին՝ երբ Հարֆիլդն ընկղմուած էր խոր քնի մէջ, Ջօրդօնը յուխտալափակ քշած բանակատեղը վերադարձաւ։ Բրանքում մտած ձիուց վայր իջնելով՝ նա շտապով վազեց մտաւ հրամանատարի վրանը և սկսեց նրա ուսին այնքան դուրթել, մինչև որ վերկացաւ։

—Ա՜հ, վերադարձե՞լ ես, ողջ-առո՞ղջ, ուրախ-ուրախ բացականչեց Հարֆիլդը նայելով կորչի երեսին։—Գնդապետ Կրէնորին տեսա՞ր։

—Տեսայ, պ. հրամանատար։ Երկու օրուգիշերից

յետոյ իր զօրաբանակով նա այստեղ կը լինի։ Իմ բռնած ճանապարհով նա էլ գալիս է։

—Կեցցե՛ս Ջօրդօն։ Մեծ ծառայութիւն արիր դու մեզ։ Աստուած դրա փոխարէն քեզ կը վարձատրի, բացականչեց Հարֆիլդը, սրտանց սեղմելով քաջ զինուորի ձեռքը։

—Խորին շնորհակալութիւն, պ. գնդապետ, խօսեց Ջօրդօնը յուզուած ձայնով, ես չէի սպասում այդպիսի վարձատրութեան . . . ։

Հարֆիլդն իր զօրքի մէջ մեծ ժողովրդականութիւն ունէր։ Բաւական էր միայն նրա մի խօսքը, որ ամեն մի զինուոր պատրաստ լինէր ինքնիրան չուրը կամ կրակը նետելու։

Մի անգամ Րոչէնկրանցի բանակից մի խորհրդապահ զինուոր եկաւ Հարֆիլդի գլխաւոր կացարանը և պահանջեց, որ իրան հրամանատարին ներկայացնեն։ Հարֆիլդն այդ միջոցին յատաջապահ գծի վրայ էր։ Զինուորին նրա մօտ տարան։

—Ջիմ, ուրախ կերպով աղաղակեց նա և վազեց Հարֆիլդի մօտ ու նրա ձեռքը սեղմեց։

—Ո՞վ էք դուք, զարմացած հարցրեց Հարֆիլդը։

—Ո՛ հին ընկերը, Ջիմ։ Ես Րոչէնկրանցի մօտ պատերազմական լրտեսի պաշտօն ունէի հարաւային Վիրգինիայում, երբ լսեցի թէ Օգիօի մէջ զօրք է կազմակերպվում Ջէմս Հարֆիլդի առաջնորդութիւնով՝ մտածեցի, արդեօք չլինի թէ իմ Ջիմն է—«Երեկոյեան աստղի» նաւընկերս, և ուղիղ քեզ մօտ վազեցի։

—Գարբի, մի՛թէ այդ դու ես, բացականչեց իրան կարգին Հարֆիլդը և ամուր սեղմեց նրա ձեռքը։ Նա նոր կարողացաւ ճանաչել այդ արեգակից չափազանց այրուած. տկարացած, պատառոտած զգեստով զինուորի մէջ Գարբի Ֆրօուներին, այն նաւաստիին, որնոր իրանց նաւի վրայ եղած ժամանակ այնպէս սերտ կապուած էր իրան հետ։

—Պարոն գնդապետ, սկսեց Ֆրօուները, յանկարծ ընկերականից պաշտօնական դիրք ստանալով, ես ձեր ծառան եմ, ինչպէս ձեզ հաճելի է այնպէս էլ ծառայեցրէք ինձ։

Հարֆիլդն ուրախ ծիծաղեց։

—Ա՜յ, հէնց ինձ այդպիսի խորհրդատուհ գինուոր է հարկաւոր, ասաց նա, և նոյն րոպէից Բրօուընը նրա զօրքի մէջ ընդունուեց։ Հարփիլդը նրան բոլորովին հաւատում էր։ Բրօուընին Օգիօի շրջակայքն այնպէս էր ծանօթ, ինչպէս իրան հինգ մատները. իսկոյն նշանակեցին, որ նա գնայ թշնամու դիրքը լրտեսէ, հետազօտէ հարաւայինների զօրքի դիտաւորութիւնը և մօտաւորապէս իմանայ թէ այդ հատուածի զօրութիւնը որչափ է։ Սպա Հարփիլդը յանձնեց նրան որ բարձրանայ Վիրգինիա լեառը և ուղիղ տեղեկութիւններ ստանայ, թէ արդեօք հիւսիսայինները նահանջած են թէ չէ։ Այս երկու յանձնարարութիւնները Բրօուընը ամենայն ճշդութիւնով կատարեց հերոսաբար։

Շնորհիւ այդ երկուսի,—Ջօրդօնի և Բրօունի՝ Հարփիլդը կարճ ժամանակում առանձին «պատերազմական լրտեսների» մի խումբ կազմեց, որոնք յետոյ թշնամու զօրքի ամեն մի շարժողութեան մասին անհրաժեշտ տեղեկութիւնները շուտ և ճարպիկ կերպով ձեռք բերելուն համար «հիւսիսային զօրքի աչքեր» անուն ստացան։ Ամբողջ զօրքը միաձայն խոստովանում էր, թէ տեղեկութիւններ ստանալու համար նրանց ընտրած եղանակն օրինակելի էր։

Վերը մենք տեսանք թէ Հարփիլդը վաղ երեխայութիւնից միշտ էլ իր ընկերների առաջնորդն էր լինում։ Նրա ընտաւորութեան մէջ նկատելի էր մի ինչոր անսովոր մեծ հաշտեցուցիչ բան, այնպէս որ ամենքին դէպի իրան էր ձգում։ Ուսուցիչ եղած ժամանակ նա իր աշակերտներին գրաւել էր և անպայման իրան էր հպատակեցրել նրանց։ Նա նոյն կերպ վարուեց և զօրքի հետ։

Այդ բանի գեղեցիկ ապացոյց կարող է լինել այն փառաւոր յաղթութիւնը, որ Հարփիլդն ունեցաւ 1865 թուականին հարաւայինների հետ ունեցած պատերազմում։ Այրամեան ինստիտուտում եղած ուսանողներից մօտ հարիւր հոգի նրա իշխանութեան տակն էին այդտեղ։ Երկու կողմն էլ պատերազմում էր կատաղաբար. հարաւայինները՝ ցրուելով անտառի մէջ՝ սկսել էին յաղթահարել հիւսիսայիններին։ Հարփիլդի զօրքից շատ երիտասարդներ ընկան։ Իսկ ինքը փոքրիկ խմբով կանգնած

մի ժայռի վրայ, որն ամեն կողմից գնդակոծվում էր թըշնամիներից, յուզուած սրտով պատերազմի ընթացքին էր հետևում և չերմեռանդագին ազօթք վերուղղում առ Բարձրեալն իր աներկիւղ զինուորների համար։ Րոպէ առ րոպէ զօրավար Շիլդոնի օգնութեանն էին սպասում, սակայն նա չէր երևում։ Ի՞նչ էր մնում անելու . . . ։ Թշնամին հետզհետէ իր յարձակմունքները սաստկացնում էր, անտառի ծառերի բարձր կատարները ցածացան հրացանների գնդակներից, որոնք և կոտորած էին յառաջացնում Հարփիլդի զօրքի մէջ։ Րոպէն թանկ արժէր։ Հարփիլդը վճռեց վերջին յուսահատական միջոցի դիմել։ Վերնագգեստը հանելով վրայից, դիմեց դէպի այն հարիւր քաջ Այրամցիներին, որոնք նրա մօտ մի առանձին խումբ էին կազմում։

—Եղբայրներ, եկէք իմ ետևից։ Կեցցէ՛ Կոլումբիան։

Այդ պատերազմական բացականչութիւնը բարեկամաբար կրկնեցին երիտասարդները և փոքրիկ բանակը, Հարփիլդին իր գլուխն առած, դիմեց դէպի սարսափելի անտառը, ուր արիւնահեղ պատերազմն էր մղվում։ Փաջերն թռչնի արագութիւնով օգնութեան հասան իրանց վտանգի մէջ եղած ընկերներին։ Արեգակն արդէն թեքուել էր և սկսել էր ծածկուիլ բարձր լեռների ետևը, մեկ էլ յանկարծ հիւսիսային կողմից ծառերի միջով երևաց իրանց ծանօթ աստղաւոր թանկագին դրօշակը։ Դա Շիլդոնն էր որ գալիս էր իր օգնական զօրքով։ Թշնամի զօրքի մէջ շփոթ ու աղմուկ տիրեց և միևնոյն ժամանակ հարաւային նների գլխաւոր առաջնորդն ընկաւ Այրամցիների վեց հատ գնդակի հարուածներից։

—Շնորհակալ եմ եղբայրներ։ Դուք ազատեցիք կենտուկեան զօրքը, ուրախ աղաղակեց Հարփիլդը, դառնալով դէպի իր առաջուայ ընկերներին, երբ նրանք թշնամուն հալածելը դադարեցրին։

Անհրաժեշտ էր որ անպատճառ Թոմաս զօրավարին իմացում տրուէր, թէ Կոլումբերլանդիան զօրքը Չիկկամօգի մօտ եղած կռւում սարսափելի վնաս էր կրել։ Ոչ ոք չէր վճռում իր վրայ առնելու այդպիսի վտանգաւոր յանձնարարութիւնը, որովհետև մինչի նրան հասնելու համար նա պէտք է անցկենար թշնամու պահնորդների մէջից։

Հարֆիլդն երբ յայտնեց որ ինքն է կամենում այդ բանը՝ սաստիկ յուզում պատճառեց զօրքի հրամանատար Ռոզենկրանցին։ Նա ձեռքը մեկնեց դէպի համարձակ երիտասարդը և ամբոխուած սրտով ասաց.

— Զօրավար, շատ կարելի է որ մենք այլ ևս չտեսնուինք։ Թող Աստուած օրհնի ձեզ։

Այդ շտապ գնալու ժամանակ Հարֆիլդն ամեն մի քայլափոխում վտանգի էր ենթարկվում. և եթէ նրա լաւ փախս ունեցող ձին չլինէր, այն ժամանակ թշնամու գնդակները, որոնք բազմութիւնով նրա ետևից տեղում էին, վաղուց նրան ձգած կը լինէին։ Նրանցից երկուսը ձիուն դիպան, իսկ նստողն առողջ պրծաւ։ Երբ նա հասաւ զօրքի առաջապահ գծին, բոլոր սպաները սարսափած նրան դիմաւորեցին։

— Հարֆիլդ, մի՞թէ դուք կենդանի մնացիք, ուրախ բացականչեց զօրավարներից մինը։ Դուք կատարելապէս ազատուել էք հրաշքով։ Ի՞նչպէս ձեզ Աստուած պահպանեց...։

Բայց Հարֆիլդը ո՛չ լսում էր և ո՛չ էլ տեսնում, այլ նրա աչքերը վախեցած որոնում էր նրան, որնոր իր այդ յանդուգն ձեռնարկութեան նպատակն էր եղած։ Վ.աբը՝ բլրի ստորոտում, ուր սփռուած կային գնդակներ և երկաթի կտորտանք՝ աներկիւղ Թոմաս զօրավարը կանգնած էր մի փոքրաթիւ խմբի առաջ։

Հարֆիլդը՝ երբ նրան տեսաւ՝ մի րոպէ իր ձին ոտնաբաւ և ձեռքը դէպի երկինք բարձրացնելով՝ արտասուքն աչքերին բացականչեց.

— Ա.հա նա, թող Աստուած նրան օգնական լինի, այժմ մեր բանակն այլ ևս չի կորչելու։

Եւ իրաւ Թոմասը Լոնդոնդերիի բանակին չարդ տալով՝ հալածականների այժը թուլացրեց, որով մի քանի տուեց Ռոզենկրանցին շունչ առնելու և մի փառաւոր կերպով վրէժ լուծելու իր կրած անյաջողութեան համար։ Ըստ այժմեան կարծիքի այդպիսի հանգամանքների մէջ հիւսիսային զօրքն իր ազատութիւնով պարտական է գլխաւորապէս զօրավար Հարֆիլդի անսովոր համարձակութեանը։

ՆԱԽԱԴԱՀ ՀԱՐՖԻԼԴ

Ջէմս Հարֆիլդի կառավարչական փայլուն ընդունակութիւնը պարզ կերպով երեւաց նրա նախագահութեան հէնց առաջին չորս ամսուայ մէջ։ Այդ մարդը կատարեալապէս արժանի էր այն պատուին, որպիսին անում էին նրան։ Նոյնիսկ անկողնապահ մարդերի կարծիքով յանձնաժողովի անդամների մէջ բարձր զարգացումի և շատ դրքեր ընթերցման կողմանէ Հարֆիլդին հաւասար մէկը չկար։ Ամերիկայի Միացեալ-Նահանգները երբէք իրանց առաջնորդ չէին ունեցած այդպիսի գիտնական և երիտասարդ նախագահ։ Իր կարճատև կեանքի համարեա կէսը ժողովրդի հասարակական և քաղաքական պահանջման ուսումնասիրութեանը նուիրեց։ Հարֆիլդն իր նախագահութեան պարտականութիւնն ստանձնած հէնց առաջին օրերից պարզ և որոշ կերպով ընդգծեց իր գործունէութեան յատկագիծը, և ամեն մի արտասանած հրապարակական ճառի մէջ առանց քաշուելու յայտնում էր իր հայեացքներն ու համոզմունքները։

Իր հայրենիքի կանոնները նա անձեռնմխելի սըրբութիւն էր համարում։ Նրա ժամանակ Միացեալ-Նահանգների ներքին վաճառականութիւնն արագ կերպով ծաղկեց, որովհետև, հասկանալով նրա օգուտը, Հարֆիլդն ինչոր կարող էր արաւ նրա ընդարձակման ու ապահովութեան համար. նեգրների ազատութիւնը նա այժմս առաջնանից աւելի եռանդուն կերպով էր պաշտպանում, և մանուկների սլարտադիր կրթութեան միտքը նա ամենայն հաստատամտութիւնով առաջ էր տանում։

— Ընտրութիւնների ժամանակ թողնել, որ թերուսները քուէարկեն՝ հասարակապետութիւնը կործանել կը նշանակէ, պնդում էր նա միշտ։

Ընդհանրապէս Հարֆիլդն իրան նպատակ ընտրեց ժողովուրդը բարձրացնել բարոյական, հասարակական և վաճառաշահութեան կողմից։

Նախարների ընտրութեան ձեռնարկելով՝ Հարֆիլդը հոգում էր միայն մի բանի մասին, այն է՝ իւրաքանչիւր վարչութեան համար գործունեայ ու ազնիւ մարդ ընտրուի. բայց թէ ինչ կուսակցութեան կարող էր պատկանել ապագայ նախարարը՝ այդ նրա համար բոլորովին միևնոյն էր։

Անկաշառելի-ազնիւ Հարֆիլդն առանձնապէս շատ թշնամիներ ունեցաւ, երբ հրաժարուեց հաստատելու օրէնսդրական ժողովի առաջարկութիւնը, որով պահանջվում էր վարչական ամենաբնտիր և աչքի ընկնող պաշտօնների վրայ բացառապէս սենատօրներ ընտրուին։ Այդ առիթով սաստիկ յարձակուեցան նրա վրայ. նրա հակառակ կուսակցութեան առաջնորդն խոկոյն հրաժարական տուեց, և համարեա ամբողջ ժողովը նոր ընտրութիւններ էր պահանջում։ Շատ կարելի է հէնց այդ ժամանակ Գիտօն մտածեց սպանել նախագահին։

Ո՛չ մի խօսքով չի կարելի ճշդօրէն արտայայտել յուլիսեան առաւօտուայ դժբախտ անցքը։ Եղանակն անանման էր. արեգակի փայլուն ճառագայթները լուսաւորում էր մայրաքաղաքը, որը կարծես ամառուան տերևներով ու ծաղիկներով զարդարուած լինէր տօնի համար։ Պաշտօնական հոգսերից և անբաւականութիւնից ֆիզիքապէս և բարոյապէս խոնջացած Հարֆիլդը երեխայի

պէս ուրախացել էր, որ գործերի դադարման ժամանակը մօտեցել էր։ Նա մտքումը դրել էր կնոջ հետ ամենից առաջ ուղևորուիլ դէպի Լոնգ-Բրէնչ, ուր նա միանգամ դժուար հիւանդութիւնից առողջացել էր, յետոյ այցելել համալսարան և ներկայ լինել իր ուսանողական կեանքի ընկերների հետ համալսարանի հրապարակական ակտին, ապա գնալ Նիւ-Ջէրս իր թանկագին մօր մօտ մի երկու շաբաթ մնալու։ Նա որչափ բաւականութիւններ էր ունենալու . . . ։

Գիտօն, այս հանգամանքին տեղեկանալով, յուլիսի երկուսի առաւօտը ատրճանակն առած, նախաբարի գալուց մի ժամ առաջ, գնաց Բալտիմոր-Պոտոմակեան երկաթուղու կայարանը։ Ծողովրդի վրէժխնդրութիւնից երկիւղ կրելով՝ վաղօրօք կառք էր վարձել, որ սպանութիւնը կատարելուց յետոյ կարողանայ անմիջապէս թաքնուիլ։

Հարֆիլդն եկաւ կայարան բաց կառքով և, իր աջակցի թևին կռթնած հանդարտ մտաւ կայարանի նախագաւիթը։ Զարագործը՝ որ կրնկակոխ հետևում էր նրան՝ հանեց գրպանից ատրճանակը և արձակեց ուղիղ Հարֆիլդի մէջքին. վիրաւորուածը երերաց, կամեցաւ ետնայել, բայց մանգաղով հնձածի պէս վայրընկաւ. նոյն րոպէին լսուեց ատրճանակի երկրորդ արձակումը։ Այդ տեսարանին ներկայ եղողների վրայ աննկարագրելի սարսափ տիրեց։ Ծողովուրդը քիչ մնաց կտոր-կտոր անէր մարդասպանին։ Սկզբում ամենքն էլ կարծեցին թէ նախագահը հէնց տեղնուտեղը հոգին աւանդեց, բայց երբ նրան տարան Սպիտակ-Տուն, շնորհիւ նրա անխոնջ կնկայ հոգատարութեան և ամեն կողմից կանչած ամենահմուտ բժիշկների աշխատանքների, կարելի եղաւ նրա թանկագին կեանքն երկարել յուլիսի 2-ից մինչև սեպտեմբերի 19-ը։ Նոյնիսկ այդ դէպքում էլ այդ նշանաւոր մարդը ցոյց տուեց իր երկաթի նման հաստատուն բնաւորութիւնը։ Զնայելով իր սարսափելի և անբնդհատ ցաւին՝ նա միշտ իր հոգու զուարթութիւնը պահպանեց և համբերութիւնով տանում էր իր տանջանքներին։

Ամենայն օր ժողովրդի մեծ բազմութիւն էր հաւաքւում Սպիտակ-Տան առաջի հրապարակի վրայ և

լուռ ու խորին յարգանքով հիւանդի դրութեան մասին տեղեկութեան էր սպասում։ Տիկին Հարֆիլդն Ամերիկայի և Եւրոպայի ամեն կողմերից անկեղծ ցաւակցական նամակներ ու հեռագիրներ էր ստանում։ Նախագահին շրջապատողները շարունակ աշխատում էին մի բան մըտածել և նրան զբաղեցնել. օրինակ՝ իմանալով որ նա շատ սէր ունի դէպի ծաղիկները՝ նրա առաջ շքեղ ծաղկափնջեր էին դնում։ Ամենայն զգուշութիւնով աշխատում էին որ ոչ ոք տխուր չլինի. այնպէս որ հիւանդը միշտ իր առաջ տեսնում էր համեստ ու քաղցրաժպիտ երեսներ։ Մինչև անգամ նրա կինն աշխատում էր որքան կարելի է քաց դոյնի զգեստ հագնել, որպէս զի ոչ մի բանով առիթ չտայ մտածելու իր թանկագին հիւանդին, թէ ինքը տխուր է։ Երբոր ցաւի սաստկութիւնը մի քիչ իջաւ՝ բժիշկները Հարֆիլդին խորհուրդ տուին օդափոխութեան գնալ։ Ամենայն կարելի զգուշութիւնով նրան Նիւ-Ջէրս տեղափոխեցին, յոյս ունենալով որ ծովի մերձաւորութիւնը և մօր տեսութիւնը կամրապնդեն նրա թուլացած ուժերը։ Ճանապարհորդութիւնը յաջողութիւնով վերջացաւ, մինչև անգամ մի քիչ յոյս ևս ծագեց հիւանդի դրութեան լաւանալու մասին. բայց դժբախտ րոպէն մօտենում էր. և երբ Միացեալ-Նահանգի ազգաբնակութիւնը մխիթարում էր իրան այն մտքով, թէ իրանց նախագահը առողջանալու է՝ նրա մաքուր հոգին առ Բարձրեալը թռաւ։

Հանգուցեալի զմռսած դիակը կրկին յետ ուղարկեցին Վաշինգտոն, ուր երկու օրուգիշեր շարունակ անհամար մարդերի բազմութիւն էր հաւաքվում իրանց մրնաս-բարովն ասելու հայրենիքի անձնանուէր, անխարդախ ու ազնիւ որդու վերջին մնացորդին։ Յետոյ այնտեղից տարան նրան իր ծննդեան քաղաքը—Կլևէլանդ, ուր և, 1881 թուականի սեպտեմբերի 26-ին, հողին յանձնեցին։

Փոխադր. { Ն. ՏԷՐ-ԱՒԵՏԻՔԵԱՆ
և
Լ. ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆՑ

ԴԱՐԲԻՆ

Ռանը ձեռքին, զնդանն առաջին,
Բիլթ երես մրոտ դարբնոցի միջին,
Կաշուէ գոգնոցն առաջը կապած,
Լռիկ կանգնած է մեր Խաչօ դարբին։

Փուքսը փռհ ա փռհ փչում է փչում,
Կայծեր ու մոխիր դէսուդէն փռում,
Երկաթի մի շերտ հնոցը կոխած,
Սաստիկ տաքից վառվում, կարմրում։

Խաչօն հանում է երկաթի շերտը,
Զնդանի վրայ կռանով ծեծում,
Շինում նրանից պայտ, մեխ ու կացին
Եւ խկոյն ջրի տաշտակը կոխում։

Փշշում է երկաթը ցուրտ ջրի միջին,
Ամպի պէս փռում տաք-տաք գոլորշին,
Կրկին պնդանում, կրկին փափկանում,
Մինչև պատրաստուած շպրտվում գետին։

Այսպէս ամբողջ օր մեր գարբին Խաչօն,
Կրակի առաջ այն կեղտ ու մուրում
Մի կտոր չոր հաց ճարելու համար
Կուչ ձիգ անելով իր կեանքն է մաշում։

Կ. Կ. Մ.-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ

Մոնպ. Դեկդ. 9

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ինչպէս է որոշ-ւում 9 ամբուց անց ձիու տարիքը։ Իննը տարին անց ձիու ներքի կոպն վերի անկիւնում կազմ-ւում է կնճիռ, յետոյ նրա քաքանչիւը տարի դրա վերա աւելանում է դերա նման նոր կնճիռ. հետևապէս, եթէ դուք տեսնէք որ ձին ունի երեք կնճիռ, այդ արդէն նշան է, որ կենդանին 12 տարեկան է. եթէ 4—ուրեմն 13։ Առհասարակ ձիու տարիքը որոշելու համար այդ կնճիռները թուին պէտք է աւելացնել 9-ը։

Մեղուների ախոյեանը։ Ամերիկացի բնագէտ Մակլոկը Մեքսիկայում մրջիւնների մի նոր ցեղ է գտել, որոնք մեղր են չինում։ Ֆիլադելֆիայի գիտութիւնների Ճեմարանը հրատարակեց այդ մրջյատի նկարագրութիւնը. նրա վորը մի վորքահատ խաղողի մեծութիւն ունի և արտադրում է հիանալի մեղր։ Մեքսիկացիք այդ մեղրը մրջիւններից հանում են առանձին ճնշահանով։ Այդ ճնշահանով մի ֆունտ մեղրը ստանալու համար հարկաւոր է 960 մրջիւն։

Ո՜հ, մարդիկ, մարդիկ, ինչեր չէք հնարիլ . . . ։

Մի ներքը, որ պէս չարժողույժ. Անգլիական մի մեծ քաղաքի մէջ—կուրկելդում բանրակ մանելու գործարանի համար մկներից օգուտ ստանալու վորձեր արին. այդ նպատակով մկներին Թողնում էին Ճախարակի չարժական առանցքին շինած մի առանձին վորքրիկ անիւի մէջ, և նորա չարժում էին այդ անիւն երանց արագ վազելով։ Այդ անիւի մէջ մկները վրայ արած վորձերից և նկատողութիւններից երևաց, որ ամեն մի հատ մուկն ազատ կարող է վազել 10-ից մինչև 11 անգլիական մղոն, և անիւին տուած չարժողուժ. Թեան օգնութիւնով կարող է գեղեցիկ կերպով բամբակից Թել մանել և փաթաթել։ Այդպղչ տարին մըկներին կերակրելու համար հարկաւոր է 28—30 կոպ. այն ինչ վերոյիշեալ նկատողութիւններից երաքանչիւր մկան աշխատանքը կարող է գնահատուել 3ր. 50 կ.։ Եթէ հանենք այս գումարից նրա սննդի ծախքը և մինչև անգամ 20 կ. էլ նրա չարժած մեքենայի վերանորոգելուն՝ նրա աշխատանքի զուտ արդիւնքը կը լինի տարեկան 3 մանէթ։ Սրանց վրայ տեղական գործարանատէրերից մէկը Կուրկելդում վարձեց մի առանձին տուն, որտեղ գետեղեց մօտ 1000 մկներից չարժուող վորքրիկ անիւները։ Գործարանը պէտք է նրան տայ, բոլոր ծախսերը հանելուց յետոյ, մօտ 2,500 ֆ. ստէրլինգ (25,000,) դուտ օգուտ։

Սրանից յետոյ դեռ մենք համարձակվում ենք մի տեսակ արհամարհանքով խօսել մկան վազվզելու մասին։

Թ.

Ա Յ Լ Ե Ւ Ա Յ Լ Ք

ԴԱՐՎԻՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Դարվինը ևս գերազանցում էր մի այնպիսի անսովոր համեստութիւնով, որը յատուկ է բոլոր երևելի մարդերին։

Սրանից քանի մի տարի առաջ Լոնդոնի մի դրավաճառ աղաչում էր Դարվինին՝ գրել իր կենսագրութիւնն իր հրատարակած անգլիացի երևելի գիտնականի աշխատութեան համար։ Խնդրողը՝ յոյս չունենալով, թէ Դարվինը կը կատարէ իր խնդիրը՝ չափազանց ուրախացաւ, երբ երևելի գիտնականն ասաց նրան. «Դուք այժմիսկ կարող էք վերցնել ձեզ հետ իմ կենսագրութիւնը»։ Այս ասելով, նա տուեց նրան մի ծալած թուղթ։ Յափշտակուած հրատարակիչը դուսեկաւ և յայտնի հետաքրքրութիւնով փողոցում բացարեց թուղթը, որի մէջ գրուած էր հետևեալը. «Իմ անունը Չարլզ Դարվին է, ես ծնուե եմ 1809 թուին, ուսել եմ, ճանապարհորդել եմ աշխարհիս շուրջը և շարունակում եմ ուսանիլ»։

ՕՐԻՈՐԴ ՀՕՈՒԷՐԴ

Չինաստանում ամենանշանաւոր հիմարուած բժիշկը անգլիացի երիտասարդ և գեղիցիկ օրիորդ Հօուէրդն է։

Երբ նա բժշկեց Տիենդզէնում Լիո Հունգ-Չենգ նահանգապետի կնոջը, երիտասարդ բժիշկը կարողացաւ գրաւել բարձր դասակարգերի վստահութիւնը, այնպէս որ երկու մեծ հիւանդանոցների կառավարութիւնը նրան հաւատացին։ Օրիորդ Հօուէրդը և Անգլիայից իր բերել տուած մի քանի երիտասարդ օգնական բժիշկ կնկերուհիները մեծ համակրութիւն են վայելում. նրանք մեծ փորձառութիւն ունին, որը, արդարև, նրանց համար մեծ պատիւ է։

ԶՈՒԱՐԱԼԻՔ

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

37) Առաջ. Կ. Մարտիրոսեանց

Եթէ իմ գիտցած մի խօսքի
Առաջի մասին տառ աւելացնէք,
Կը ստանաք անուն քաղաքի,
Հայաստանի Սիւնիք նահանգի։
Իսկ եթէ երկրորդը կարդաք,
Հայաստանի աւերակ ստանաք,
Որ Հայոց ազգի ծաղկեալ ժամանակ
Եղած էր շքեղ մի մայրաքաղաք։
Երրորդն էլ մի տառ է,
Հայկական այբուբենի,
Զայնաւոր թէ բաղաձայն
Այդ դուք ինքեանդ գտէք։
Երեք մասը մի կարդալով,
Կը ստանաք աղջկայ անուն
Մի հսկայ ու զօրեղ մարդու,
Որ կնքեց կեանքը Արտազու դաշտում։

38) Առաջ. Մ. Ալիխանեան

Կենդանի չեմ և ոչ մարդ,
Որդի ունիմ տասներկու,
Թոռներս են իմ որքան շատ,—
Այդ պէտք է որ գիտենաս դու։
Թէ գլուխս իմ կորես,
Կաղաղակեմ թէ արի,
Թէ պոչիցս ինձ զրկես
Ո՛հ, մի՛ թողիր կը լսուի։

39) Առաջ. Կ. Տէր-Ասատուածատրեանց

Այն ինչ բանն է, որ իրան այրել է տալիս՝ ուրիշի գաղտնիքը պահելու համար։

Շ Ո Ւ Տ Ա Ս Ե Լ Ո Ւ Կ

Քեռի, էլի էն այրէն մռա...։

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂ

ԹԱՄԲԻ ԵՒ ՃՈՒԽՏԱԿ ԹԱՄԲԻ

Թամբի խաղալու համար ինչքան շատ հոգի լինին, այնքան լաւ է. խաղացողներից մէկը դառնում է «թամբ» (խաղագլուխ), կանգնում մէջտեղը և մնացեալները մէկ-մէկ գալիս են ձեռով դիպչում նրան և գնում. վերջինը երբ խփում է, ասում է. «թամբ, թամբն ինձ մօտ է և վախչում է։ Խաղագլուխն աշխատում է միայն նրան բռնել ով թամբն ունի, բայց միւսներն առաջը կտրում են և չեն թողնում, իրանք խփելով ազատում են ընկերին և այժմ թամբն ուրիշի մօտ է և խաղագլուխը ստիպուած է նրա ետևից ընկնել, բայց մի ուրիշն էլ

վրահասնելով, խփում է և ինքը վերառնում թամբը։ Այսպէս խաղը շարունակվում է, մինչև որ խաղագլուխը բռնում է յետին խփողին, որով խաղը վերջանում է և բռնուողն է դառնում թամբը։

Ձուխտակ թամբին միևնոյն խաղն է, միայն այստեղ երկու են բոլոր խաղացողները և խաղագլուխներն անպատճառ ձեռք-ձեռքի տուած պիտի լինին, իսկ միւսները ազատ. եթէ թամբ առնողը բռնուեցի, միւս ընկերն էլ հետը պիտի խաղագլուխ դառնայ։

Մելիք

ՐԵԲՈՒՍ

Առաջ. Գ. Բատիկեանց

Ն ԻՄ

ԵՒ

Ա 365 օր. Մ



Ի։

ՉԱՅՆ ՏՈՒՐ, Ո՛Վ ԾՈՎԱԿ։

Ծանր

Ա. մեն տեղ տէր բան ես ըլեր ւըս Թիւն, կաք ծես Թէ մե ռած լի նի

բընու Թիւն։ Ներսած սըզաւոր, պանդուխտ մայնակ, Ո՛հ, քեզ եմ տեսնում, ով վայ

լուն լուս նակ։ Ո՛հ, քեզ եմ տես նում, ո—վ վայ լուն լուս նակ։

1858 թ. **ՐՊՓԻ**

ԱՂԲԻՒՐԻ № 10-ի ՄԷՋ ԵՂԱԾ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ ԵՒ ԲԵՐՈՒԱՅԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ 31) Փուքս։ 32) Հրացան։ 33) Ցօրեն։ 34) Մուշեղ։ 36) Մկրտատ.

36) Հ—ա—յ—ը
ա—ն—ի
յ—ի
ը

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱՋԱՐԵԱՆՑ։

Дозволено цензурою. Тифлисъ. 15 декабря 1883 г.

Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 5

Ա Ղ Բ Ի Ւ Ր

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՄԻ ՏԱՐԻ ԱՆՑԱՒ

Անցաւ մի տարի։ Այսօր լոյս է տեսնում այս տարուայ մեր վերջին №-ը։ Գիտենք, որ շատերը մեզանից գոհ են մնացել, գիտենք և այն, որ կան նաև դժգոհները —Ինչ արած։

Այսօր մենք կը կամենայինք մի համառօտ հայեացք ձգել մեր միամեայ մանուկ «Աղբիւրի» անցեալի վրայ, կը կամենայինք հետամուտ լինել թէ արդեօք այդ մանուկը առողջ է ծնուել, և մի տարուայ ընթացքում առողջ է մնացել, թէ ընդհակառակն՝ այլանդակ մի հրեշ ծնուելով՝ սարսափ ու զզուանք է յարուցել շրջապատողների մէջ, բայց. . . . բայց, ասում են, մայրն իր զաւակի թերութիւնները դժուար է նկատում... Ո՛չ, դա սխալ է։ Մայրը շատ էլ լաւ նկատում է իր զաւակի պակասութիւնները, միայն շատ անգամ անգօր է լինում նրանց առաջն առնելու, նա շատ անգամ ներողամիտ է գտնվում դէպի իր զաւակի մի քանի թերութիւնները, որովհետև նրանց գոյանալու իսկական պատճառները նրան լաւ յայտնի են, այն ինչ ուրիշները բոլորովին այլ կերպ են վերաբերվում։ Բերենք այստեղ մի օրինակ. մի գեղեցիկ առաւօտ մայրը հագցնելով իր վոգբիկ մանուկին, ամենայն վարդաքչանօք և զգուշութիւնով նորան և դուրս է տանում մաքուր օդ ծծելու. յանկարծ մի անցորդ՝ շտապ գնալիս իր գործին, այնպէս է դիպչում մօրը, որ մանուկը՝ սլքուելով ձեռքից ու տապալուելով գետնի վրայ, վնասվում է՝ գոյանում են նրա մարմնի վրայ կապտածները, վէրքեր . . . Ի հարկէ մայրն ամենայն լնանմքով բարձրացնում է նրան, վիաթաթում է վէրքերը, բայց . . . բայց կապտածները, վէրքերի տեղերը — սպիները դարձեալ երևում են...։ Ո՞հ, Ինչ տգեղ մանուկ է ասում են կարճատեսները, նրանց ուշադրութիւնը երեխայի մարմնի կապտած տեղերի վրայ դարձնելով և չնկատելով նրա մարմնի իսկական գեղեցկութիւնը, նրա մարմնի ուղիղ կազմուածքը . . . Նրանք մոռանում են, որ մանուկը մի շտ դիւրաշարժ է լինում, նրանք մոռանում են, որ կապտածները բոլոր դիւրաշարժ մանուկներին յատկանիշ բաները են . . . ։ Ոչ մի մայր չի կարող ազատ կացուցանել իր կենդանի բնութիւն ունեցող մանուկին այդ անհանգստութիւնից յառաջացած անախորժ հետքերից . . . ։

Դառնանք «Աղբիւրին»։ Ձեռնարկելով Աղբիւրի հրատարակութեանը, մենք ունէինք և ունինք որոշ ուղղութիւն, որոշ ծրագիր, և մենք այս տարուայ ընթացքում աշխատել ենք չեղոքել մեր ուղղութիւնից, բայց թէ որչափ է մեզ յաջողուել այդ, մենք հրաժարվում ենք պարզելուց, միայն ոչ նրա համար, որ մենք մեր մանուկի թերութիւնները չենք նկատում. դա մեր անտեսանելի մամուլի պարտականութիւնն է։

Մեր գլխաւոր պակասութիւնը մեր բարեկամները տեսնում են «Աղբիւրի» լեզուի անմաքրութեան մէջ. խմբագրութիւնս մասամբ խոստովանում է իր այդ պակասութիւնը։ Մենք ուզել աշխատել ենք մանուկներին հասկանալի լինելու, և մեզ ոչինչ չի ստիպել գործածել մի այնպիսի լեզու, որ գուցէ և շատ ճոխ ու բուն հայկականը լինի, բայց անմատչելի մեր մանուկներին։

Գալով բովանդակութեանը՝ մենք հարկաւոր ենք համարում նկատել, որ մենք համարեա թէ բացառապէս մանուկների բարոյական զարգացումն ենք ունեցել աչքի առաջ. մտաւոր զարգացման համար կարծես բոլորովին հոգս տարած չենք։ Այդ թերութիւնը բղխում է մեր հանդիսի վոգը դիւքից. մենք չէինք, և չենք էլ կարող մի վոգերիկ հանդիսով նպաստել մանուկների թէ բարոյական և թէ մտաւոր զարգացմանը։ Այդ կողմից մենք շատ ուրախ ենք, որ ունինք մի ընկերակից, որ լրացնում է «Աղբիւրի» այդ պակասութիւնը—դա «Բուրաստան Մանկանց» մանկական գեղեցիկ հրատարակութիւնն է։ «Աղբիւրը» և «Բուրաստանը» միմեանց լրացնելով, մէկը գլխաւորապէս զարգացնելով մանուկի բարոյական կողմը, զարգացնելով նրա կամքը, իսկ միւսը գլխաւորապէս ընդարձակելով մանուկի մտաւոր հորիզոնը՝ այսինքն տալով գիտութիւնների յայտնի պաշար՝ կարծես կազմում են «մի լիակատար մանկական հրատարակութիւն»։

Մի քանի խօսք ևս ունինք ասելու մեր ծնողների բաժին մասին։ Սէկ չիշում են մեր ընթերցողները հէնց № 1-ի մէջ մի տեղ ասել էինք. «Աղբիւրը մանկավարժական մասնագիտական մի թերթ չէ, ինչպէս չատերը կարծում են, և եթէ նրա բովանդակութեան մէջ մտնում են մանկավարժութեան և դաստիարակութեան վերաբերեալ՝ յօդուածները, առաջարկութիւնները, դրանք մասնագէտ դաստիարակները պատրաստելու նպատակ չունին։ Այդ տեսակ յօդուածները երբև ձեռնարկ պէտք է ծառայեն դաստիարակներին «Աղբիւրի» ուղղութեան և նպատակի հետ ծանօթանալու համար»։

Որքան չիշում ենք՝ մեր այս խօսքերը մի քանիսներին մոլեթը երևացել. ցաւում ենք.... «Աղբիւրը», կրկնում ենք դարձեալ, մասնագէտ մանկավարժներ պատրաստելու պրետենզի-

այից հեռու է. «Աղբիւրը» ուզում է զրոյց անել դաստիարակների հետ մխիթարն այն չափով, որչափ հարկաւոր է հասկացնելու թէ՝ մանկական բաժնի մէջ դեռեւում յօդուածներն լինչ նպատակի են ծառայում, թէ՝ «Աղբիւրը» առ հասարակ լինչ խոլինկաներ է ուզում զարգացնել իր ընթերցողների մէջ. օրինակ՝ այս տարի որքան էլ թերի է եղել «Աղբիւրի» դաստիարակների բաժինը, դարձեալ յայանի չափով ծառայել է իր նպատակին—հարուստելով բուերժուազական մանկական գրականութեան մէջ, «Աղբիւրի» մանկական բաժինն ունեցել է բոլորովին հակառակ ուղղութիւն...։ Մի՛թէ այժմ էլ մուր են երևում մեր ասածները . . .։

Առաջնակայ տարուանից «Աղբիւրի» երկրորդ բաժինը լոյս կը տեսնի առանձին տետրակներով չորս անգամ տարէկան։ Որքան մեզ թոյլ կը տան մեր ոյժերը, մենք ի՛նչ ստանանք մի քանի հարցերի վերաբերմամբ վոքր ի շատէ ընդարձակօրէն խօսել մեր դաստիարակների հետ։

Դարձեալ մի քանի խօսք և դրանով մենք կը վերջացնենք մեր ասելիքը. այս տարի մենք մի քանի բան ենք խոստացել մեր բաժանորդներին, բայց դժբախտաբար չկարողացանք կատարել. նախ՝ խոստացել էինք պ. Բաֆֆու «Տարուայ եղանակները պատկերներում», որ պէտք է տպագրուէր տարուայ ընթացքում։

Բայց ում յայանի չէ, որ մեր յարգելի բանաստեղծը սաստիկ զբաղուած էր մասնաւոր գործերով, ուրեմն մենք ինչպէս կարող էինք պահանջել մի այնպիսի խոստմունքի կատարելը, որ նա ոչ մի կերպ չէր կարող . . .։

Բացի այդ, մենք խոստացել էինք երեք անձանց կենսագրութիւնները. մինչև այսօր մենք սպասում էինք Պետերբուրգում պատուիրած նրանց պատկերներին, բայց դժբախտաբար մինչև այժմ չստանալու պատճառով չկարողացանք կատարել և այդ խոստմունքը։

Ինչ կը վերաբերի նիւթերի քանակութեանը, թող ոչ ոք չդատապարտի մեզ, որ մենք խոստացածից պակաս ենք տուել. մենք խոստացել էինք «մօտաւորապէս 500 եր». և տուել ենք մանկական բաժին 486 եր. և ծնողներինը 48 եր. ընդամենը «534 երես»։ Բացի դրանից մենք ամեն մի զրոյց գործ դրինք, որ «Աղբիւրը» կարելի եղածին չափ չքեզ հրատարակութիւն լինի և հէնց այդ էր պատճառը՝ որ մենք ամենայն պատրաստականութիւնով № 1-ը նորից տպագրեցինք . . .։

Եւ մենք չենք զլխում մեր զոհաբերութիւնների վրայ. «Աղբիւրը», ինչպէս ցոյց է տալիս մեր համակրողների թիւը, սկսելի դարձաւ շատերին. նրան հաւանում են, նրան համակրում են, և այդ համակրութիւնն օրէցօր աճում է։ Մենք «Աղբիւրը» սկսեցինք հրատարակել 50 բաժանորդ ունենալով, և հաւատալով մեր գործնին բո-

որովհետև չէինք յուսահատվում և շարունակում էինք մեր գործը, և ահա տարուայ վերջը մեր բաժանորդների թիւը 800-ից անցաւ:

Տարին չլրացած առաջնիկայ տարուայ բաժանորդների թիւը արդէն 400-ից անցնում է, այդ թուի կէսը բոլորովին նորեր են: Չէ՞ որ դա էս մի բան է ցոյց տալիս . . . :

P. S. Ի դէպ. երկու խօսք էս ասել այն ձևի մասին, որ «Աղբիւրը» ընդունած է. նա կրան միշտ հեռու է պահել բարոյական կրատներից, այն բարոյական ուղղութիւնից, որ տիրապետում էր մինչև վերջին ժամանակները մեւս ազգերի մանկական գրականութեան մէջ. և որի կրկ թէ պաշտպանողները յայտնվում են մեր նեղճիկ գրականութեան մէջ: Փորձն արդէն ցոյց է տրել, որ պարզութիւնով են դաստիրակվում նկատական բարոյական մարդիկը: «Աղբիւրը» երբէք չի վախենալ դեղչկուհու պատկերը նկարելով մանուկին ցոյց տալ և նրա մերկ սրունգները (1): Մերկ սրունգները տեսնելուց միմիայն կեղտոտ մարդերի մէջ կարող են շարժուել անասնական կրքերը. երեխաները դրանից ազատված են . . . :

---

1) Պ. Րաֆֆու բանաստեղծական պատկերը «Աղբիւր» № 2 Զրաբերդ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Շնորհակալութեամբ ստացանք վրացերէն նոր լոյս տեսած «Նօբաթիւ» (Երախայրիք) մանկական ամսագրի փորձնական համարը: Բովանդակութեամբ բազմակողմանի, ընտիր և ամփոփ №-է, և արտաքին կողմից էլ շատ չքեղ հրատարակութիւն:

Վրացոց մէջ «Նօբաթիւն» առաջին մանկական ամսագիրն է, եթէ չհաշուենք քանի մի տարի սրանից առաջ հրատարակած «Մղարօ» ամսագրի երեք փոքրիկ գրքոյկները: «Նօբաթիւ» պէս մի չքեղ հրատարակութիւն վրացոց մէջ չտեսնուած բան է, և յոյս ունենք, որ դա կ'ունենայ գեղեցիկ ապագայ ու յաջողութիւն: Շնորհաւորում ենք այդ ամսագրի խմբագիր պ. Ղուլաձէին իր գեղեցիկ և կարևոր ձեռնարկութեան համար:

Մասնակցում են վրացոց ամենալաւագոյն գրականական ոյժերը:

«Նօբաթիւ» տարեկան վճարը շատ մատչելի է—4 ռուբլի:

«Աղբիւրը» այս №-ում տպում ենք «Նօբաթիւ» յայտարարութիւնը, որի վրայ հրաւիրում ենք մեր բնթերցողների և վրացոց ուշադրութիւնը:

Առաջնեակայ հանդիսքեց կը սկսենք տպագրել պ. Րաֆֆիի «Պարոյը Հայկազն» վերնագրուած պատմական պատկերը։

—

Շնորհակալութեամբ ստացանք ուղարկուածներ

ՎԵՐՋԻՆ ՅՈՒՇԻԿ

Նուէրը Մարիամեան—Յովհաննեան Ուսումնարանի ուսումնասիրաց աշակերտուհիներին նոցա կրօնուսոյց Աբեղեան Բահ. Բագրատունոյ, դինը 30 կ.։

—

Մ. ԿՈՂՄԱՆԵԱՆի «ՊԱՏԻՒ»
Դրամա 4 գործ. 6 պատկ. գինը 40 կ.

—

ԹԵՄԱԿԱՆ ՎԵՐԱՏԵՍՔի ԵՒ ՇԱՏԱԿԱՐՈՒՆԻՑ

—

Ուսուցիչ. Ե. պ. Վերտեսուչ, ինդրեմ շնորհ անէք ինձ ձեր Թեմում մի տեղ։

Վերատեսուչ. Ո՞րտեղ կը ուզուտեղ։

Ուսուցիչ Ե. Մեսական ուսումնարանից դուրս գալու օրից սկսած մինչև այժմ ազատ ժամերս նուիրել եմ մանկավարժութեան, ինքնակրթութեամբ ձեռք բերելով այդ տեղը մանագիտութիւնը կարելիքիս բարօրութեան համար։

Վերատեսուչ. Շատ լաւ, ի նկատի կ՚ունենամ և ձեղ, ուր այժմ ցտեսութիւն։

Ուսուցիչ Ե.-ան Ուրեմն ի՞նչ կարող եմ պատասխան տանալ։

Վերատեսուչ. (Ձանձրացած) Մի շաբաթից։

Ուսուցիչ Ե.-ան. Ձեղ մտո կը հրամայէ՞ք, որ շնորհ բերեմ։

Վերատեսուչ Ոչ, դուք նեղութիւն մի՛ քաշէք, ես կը կարողանամ Թողէք միայն ձեր կարդին։

Ուսուցիչ Ե.-ան. Տէր-Յ. խոհարարին ուղարկեցէք, նա ինձ կը կանչէ։

Վերատեսուչ. Նա ձեր ազգականն է՞։

Ուսուցիչ. Ե.-ան Ո...չ, ես տէր հօր խոհանոցումն եմ ընակվում և խոհարարին օգնական եմ։

—

Խոհարարների օգնականներ են մեր ուսուցիչներից շատերը։

188., յուլիս 13

«ԱՂԲԻՒՐԻ» ՊԱՅՄԱՆՆԵՐը

ա) Ամսագրիս նեւթերը ուղարկողները պէտք է կարողանան իրանց կատարեները, եթէ կեղծ անուններով են գրում և իսկական անուններն էլ։

բ) Անպայման ուղարկուած նեւթերը խմբագրութեան սեպհականութիւնն են համարվում։

գ) Ձոպագրուելի նեւթերը խմբագրութեան ստացած օրից վինչև երեք ամիս կարելի է յետ ուղարկել տիրոջ ծախքով, եթէ նա երկու Թերթից աւելի է, իսկ երկու Թերթից պակաս գրուածները բոլորովին յետ չեն ուղարկվում։

դ) Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել 5 կամ 7 կ. մարկաներ։

ե) Յայտարարութիւնները ընդունվում են միմիայն խմբագրութիւններից, գրաւաճառանոցներից, գրադարաններից, հեղինակներից, Թարգմանիչներից և ուսումնական պետութիւններ վաճառողներից։

Յայտարարութիւնների տող մի քանի, տող երով, վճարը 20 կոպէկ է, միջակ տառերով, 30 կոպէկ է, մեծ տառերով 40 կոպէկ։

զ) Այն անձինք, որոնք մի ամսուայ ընթացքում №-ը լոյս տեսած և յայտարարած օրից չեն տեղեկացնել իրանց №—ը չստանալուն համար, այնուհետև խմբագրութիւնս իրան պարտական չէ համարում քաւականութիւն տալ այդպիսիներին։

Մեր մշտական աշխատակից պ. Ն. Ա. Սալավէ—Նեմէլովի «Հասկուլ» վերնագրով յօդուածը, որ տպուեց «Աղբիւրի» № 2—ում, արտատպուել է ռուսաց մանկական «Игрушечка» հանդէսի № 40—ում:

—

Ռուսաց մանկական յայտնի երկու թերթի „Родникъ“ և „Игрушечка“ խմբագրութիւնները յայտնեցին մեզ երանց պատրաստակամութիւնը՝ ձրիապէս կատարել խմբագրութեանս յանձնարարութիւնները՝ նկարներ փորագրել տալու, ձեռք բերելու, ուղս մանկական յայտնի գրողների հետ բանակցելու և այլն մասին:

—

«Աղբիւրի» բաժանորդագրութիւնն այս տարի աւելի յաջող է ընթանում: Եթէ այսպէս շարունակուի մինչև ամսի վերջը, դուցէ կարող լինինք մի փոքր լայնացնել «Աղբիւրի» դերը և աւելի շքեղ հրատարակել:

—

Ներկայ համարի հետ ուղարկում ենք «Աղբիւրի» երկրորդ պրեմիան՝ օրացոյցը:

—

Ամեն հայ-ուսումնարանի և ամեն մի հայի զբաղեցնելի անհրաժեշտ դարձ՝ նկարիչ Ստեփաննոս Ներսիսեանի դեղեցկատիպ Ս. Սահակ Պարթեւ և Ս. Մեսրոպի պատկերներն արդէն վաճառքում են: Երկու նկարը միասին 10 ռ. արժէ: Դիմել կարելի է և խմբագրութեանս,

—

Խմբագրութեան մէջ ստացուել են հետևեալ գրքերը՝ Դոկտ. Ա. Բաբայեանի «Առողջապահութիւն մանկական հասակի» ֆրէօբելեան ծաղիկոցների առողջապահութիւն, գինը 20 կ.: Պ. Յ. Նապարեանցի «Հայոց առաջին ընդհանուր Ուսուց. ժողով». գինը 50 կ.: Դոկտ. Ա. Աբրահամեանի քաղաքա-անտեսական դասախօսութիւններ «Աղգաբնակութիւնը և ազգային տնտեսական շարժումները» գինը 40 կ. պ. պ. Ց. Գ.—Բ. և Մ. Պ. Թուման կանական խնդիրների ժողովածու» գինը 35 կ.: Պ. Տ. Նաւասարդեանի «Հայ ժողովրդական ուսանդութիւնները» (հանելուկներ, անէծքներ, օրհնութիւններ, երդումներ, շուտասելուկներ, փաղաքշական խօսքեր, առածներ և երգեր) գինը 30 կ.: Պ. Ա. Միքելեանի «Հայոց Մեծ վարդապետ ս. Մեսրոպը (պատկերով), գինը 25 կ.: Պ. Կ. Մատինեանի «Հայելի» կուպլետները ըմպից հաբդալու համար, գինը 20 կ.: Պ. Վ. Ռ. Գինեգործութիւն» գինը 30 կ.: Ալէքսանդրապոլի Սահականուշեան օր. ուսում. վարչութիւնից «Տատամսակ Սահականուշեան օրիորդաց հոգ. ուսումն. հայոց Ալէքսանդրապոլի»: Պ Ց. Տէր-Մովսիսեանցից մի բրօշիւր ռուսերէն լեզուով երկու մաս, ա). Краткій очеркъ молочнаго дѣла по Сѣверной Двинѣ և բ). Замѣтки по холмогорскому скотоводству“.

—

Յանկալի կը դոնէ համարել թէ ինչ են մտածում մեր յարգելի այն բաժանորդները, որոնք մինչև հիմա չեն բարեհաճում վճարել իրանց պարտքը: Եթէ մենք խնայում ենք նրանց և քաշվում ենք անուններով հրապարակ հանելուց, մի՞թէ իրանք այդ չեն զգում: Բայց այդպիսինները պէտք է լաւ հասկանան, որ ղիջողութիւնն իր չափն ունի, և համբերութիւնն էլ իր սահմանը . . .

—

Առաջիկայ տարուանից «Աղբիւրը» կը տպագրուի ամենամսեայ, գեղեցիկ և նոր ձևի տառերով, որ մեր տպարանատէր պ. Մարտիրոսեանը պատրաստել է տուել արտասահմանում:

«Աղբիւրի» № 1—լոյս կը տեսնի Հեշտ յուշուարի մէկին:

„Ա Ղ Բ Ի Ւ Ր“

Առաջիկայ տարի կը հրատարակուի նոյն դիրքով և նոյն ուղղութիւնով։

Առաջիկայ տարի «Աղբիւրին» կ'աշխատակցեն՝ Ա ղ ա յ ե ա ն ց Ղազարոս, Ալավերդեան Ազէքսանդր, օր. Արղութեան Սօֆիա, Աբելեան Ներսէս, Բարկաս, Գաստակեան Աբրահամ, Եաղուբեան Գասպար, Ե. Մ. օր. Թամար ,Յօջամիրեան Գրիգոր, Ֆերուկ, Մելիք-Ջ ա հ ն ա զ ա ր ե ա ն ց Կոստանդին, Միրզոյեան Գաբրիէլ, օր. Միհրուհի, Մարտիրոսեանց Կոստանդին, օր. Մամիկոնեան Մարիամ, Միքայէլեան Քրիստափոր, Մելիք-Ադամեան Լևոն, օր. Յովհաննիսեան Գայեանէ, Ս. Քամալեանց, Չիրվանզադէ, Սրինգ (Մեհրաբեան Արշակ) Ս ա լ ա ւ ի է վ Ն ե ո մ է լ օ վ Նիկոլայ Ալէքսանդրովիչ, Սալավիէվ Նիկ. Պետ. (նկարիչ), Վաչագան, Տէր-Աւետիքեան Նիկողայոս, Տէր-Յովհաննիսեան Նատալիա, Ր ա ֆ ֆ ի, տիկ. Փամփուխչեան Մարիամ, Սալանեանց Աւետիս, Փափազեան Վրթանէս։

Բաժանորդագինը Հանդերձ ճանապարհածախսով . . 3 ռ.
Կէս տարուանը . . . . . 2 »

Ստորագրուել կարելի է բացի խմբագրատնից և Թիֆլիզի հայ դրավաճառանոցներում, Պ. Ղահվերդեանի պավիլիոնում, մանկական գրադարանում, լուկ Պօլսում «Բուրաստան Մանկանց» հանդէսի խմբագրութեան մէջ։

„ԱՂԲԻՒՐԻ“ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ՍՂՆԱԽ Զ. Ղ. Դատարկ բարեմաղթութիւններով և այն էլ Բաքուի երկրագործութեան և վաճառականութեան ժամանակ՝ ձեր ուսումնարանները չեն կարող յառաջ գնալ։ Այո, համաձայն եմք ձեզ հետ, որ շատ մեծ ամօթ կը լինի Սղնախի հասարակութեանը, եթէ չաշխատի իր ուսումնարանները ծաղկեցնելու։ Անտարբերութիւնը շուշու հասարակութեան համար էլ ամօթ, նրանք արդէն անհատութիւնն ու անտարբերութիւնը յանձն են առել, գոնէ դուք լինէք՝ դրա հակառակն արէք։

Ն. ՆԱԽԻՋԵՒԱՆ Գ. Խ. Կարող էք. սխալմամբ և այդտեղ էլ է ուղարկուած, չաթժէ յետ ուղարկել։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Գ. Եաղ. Շնորհակալ ենք, բայց ցաւում ենք, որ մինչև այժմ ուղարկածներից ոչ մէկը յարմար չէր։ Յուսով ենք կը շարունակէք։

— Ա. Դ. Ինչո՞ւ այդքան ուշացնում ես։ Այո՛, վէճերնայում կը պատրաստեն միայն վերջիններըս։

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼ. Տէկ. Ապ. Կ. Զեր «Նիւտեմբերգեան սքանչելի ձև» կը հրատարակենք։ Ինչքա՜ն մտացաք մեզ։ Վերոյիշեալ նամակները լեռվին կը համապատասխանեն «Աղբիւրի» ուղղութեանը։

ԹԻՓԼԻՋ. Վ. ա է ա դ ա ն. Շուտով կը սկսենք տպագրել։ Շարունակեցէք։

ԿՎԱՐԵԼԻ. Վ. Ռ. Համաձայ լինելը և իր չափը ճանչնալը, կարծում ենք, մարդուս ամենից բարձրացնում են, քան սորայնում։ Խորհուրդ ենք տալիս ձեր արժանաւորութիւնները գիտել և այնպէս շարժուիլ։ Շանդգնութեամբ և լրբութեամբ չէ հաւանաբար աշխարհը։

ՇՈՒԼԱՎԷՐ. Մ է կ ո դ. Սատանէք ձեր նամակները։ Եթէ նրանց մի մասն էլ կարողանանք հատարել, շատ ուրախ կը լինենք։ Շարունակեցէք, շատ շնորհակալ կը լինենք։

Վ. ԱԳՈՒԼԻ!!. Ք. Լ. Մենք ընդդէմ չենք, միայն փոփոխութիւնից խորշում ենք,

— Ա. Տ. Զեր ոճը շատ դեղեցիկ է և պարզ, յոյս ունենք կը շարունակէք։

ԹԱՎՐԻԶ. Ն. Տ. Ա. Ցետ ուղարկեցէք, էլ նեղութիւն մի՛ կրէք. ուշ է արդէն։

ՄՕՆՊԵԼԻԷ. Կ. Մ. Շ. Եթէ ձեր գրածը յիրաւի ուղիղ է . . . շատ դեղեցիկ։ Առաջիկայ №-ից կը սկսենք տպագրել։ Սատանք միւսներն էլ, բայց վերջիններին մասին ոչինչ չէք հաղորդում։ Գրեցէնից այո՛, ստացել ենք, շնորհակալ ենք։

ԼՕՆԴՕՆ Շատ անճաշակ է, այդ տեսակները և այդ գնից դեռ էժան էլ այստեղ կարելի է ձեռք բերել։

ՇՈՒՇԻ. Տ. Յ. Մեծ։ Չենք կարող չերևակայել. միևնոյն է, երբ կամենաք, առաջուց խոստանալ՝ Թէ կը տպագրենք, կամ երբ, չենք կարող։

ՄՈՍԿՈՒԱՅ Ե. Մ. Ստացել ենք, բայց անյարմար է, Թող շարունակեն։

Ն. ՆԱԽՋԵՒԱՆ. Գ. Խ. Մեզ համար միևնոյն է, ինչ կամենում են, Թող տարածեն։ Հէնց այդպիսիների վարմունքն է, որ մեզ ստիպում է տալիս։ Ոչ Թէ դատապարտելու ենք «Աղբիւրը», այլ ընդհակառակն ստիպում ենք շքեղացնելու և գունդ գնքն էլ մեծացնելու։

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱՋԱՐԵԱՆՑ։

Дозволено цензурою. Тифлисъ. 25 декабря 1883 г.

Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 5

ԲԱՅՈՒՄՆ Է ՀԵՏԻՒԵԱԼ ԹԵՐԹԵՐԻ ԱՌԱՋԻԿԱՅ 1884 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԲՈՒՐԱՍ· ՄԱՆԿԱՆՑ

Պատկերազարդ հրատարակութիւն ամսօր երկու անգամ, տարեկան գինը 4 ր. Հրատարակվում է Պօլսում. առաքվում կարելի է «Վարժարան» տպագրի խմբագրատանը։

ՄՇԱԿ

Գրական քաղաքական լրագիր տարեկան գինը 10 ր. կէս տարուանը 6 ր. խմբ-հրատ. Գ. Աբծրունի. Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Мшакъ“

ԱՐՁԱԳԱՆՔ

Քաղաքական գրական շաբաթաթերթ. տարեկան գինը 5 ր. հատարները 10 կոպ. Հասցէն՝ Тифлисъ, Ред. „Ардзаганкъ“ *Խմբ-հրատ Ս. Յովհաննիսեան*

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Գրական ամսագիր լրագիր տարեկան գինը 10 ր. կէս տարին 6ր. Խմբ. Գ Սիմէոնեանց. Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Мегу Айастани“

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԹԵՐԹ

Մխիթարեան հրատարակութիւն տարեկան գինը 3 ր. Խմբ. հրատ. եժ. Լ. Տէրգանեանց. Հասցէն՝ Эривань. Ред. жур. „Гигіеническій Листокъ“

Ապագային 1884 Թ. յունուարից թերթը կը հրատարակուի քաղաքական-գրական տեղեկագիր Թերթ

ՆՈՐ-ԴԱՐ

Տարեկան գինը 10 ր. կէս տարուանը 6 ր. Հասցէն՝
Тиф. Редакція „НОРЪ—ДАРЪ“
Խմբ.-հրատ. Ս. Ապահազարեան.

ԵՐԵԽԱՆԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հրատարակվում է շաբաթը երկու անգամ. տարեկան գինը 1 ր. խմբ.-հրատ. Է. Տէր-Գրիգորեանց. Հասցէն՝ Эрив. Типографія Теръ-Григорянъ.

СЕМЬЯ И ШКОЛА

Иллюстр. отд. для дѣт. 12 №№ 8 р.
Учебн.—воспит. отд. . . . 5 р.
(Полн. журн. 22 №№). . . 12 р.
Петербургъ. Больш. Сад. пр. Гостин. дв. д. № 12.

ИГРУШЕЧКА

Иллюстр. еженедѣльн. жур. для дѣтей год. цѣн. съ пересыл. 6 р.
Ред.-изд. **Т. Пассекъ.**
Петербургъ. Мал.-Подъяческ. д. 4 кв. 16.

РОДНИКЪ

Дѣтск. иллюстр. ежемѣсячн. журн. год. цѣн. съ пересылк. 5 р., съ приложен. сборн. „Воспит. и Обуч.“ . . . . . 6 р.
Ред.- изд. **Е. Сысоева**
С. П. б. Спасская у. д. № 1

MON JOURNAL

récuelle mensuel pour les enfants de cinq a dix ans. Pris de l'abonnement dun an 2 fr 25. Paris Hachette et C-ie. èditeurs 79 Boulevard Saint Gérmain,

1884 წ. იანვრის თვიდამ

ქ თ ბ ი ლ ი ს ში ი

გამოიცემა ყოველ-თვიური ყრმათა საკითხავი სურათ-ბიანი ჟურნალი

„ნ ო ბ ა თ ი“

ხედაგოგიური ნაწილის დამატებით.

მთელი წლის გამოცემა ჟურნალი „ნობათი“-სა იქნება 12 წიგნი, რომელიც ზედ-მიწევნით შეადგენს 800 გვერდამდე დიდი ფორმატისა და თითო წიგნი არა ნაკლებ 4 ბეჭდ. ფურცლისა.

ყრმათა საკითხავ წიგნისათვის საჭირო სურათები დამზადებული იქნებიან პეტერბურგში.

ყრმათა საკითხავ წიგნში დაიბეჭდება. ლექსები, მოთხრობები, ზღაპრები, სურათები ხალხის ცხოვრებიდამ; ბიოგრაფიული მოთხრობები, მოგზაურობა, ეპიზოდიური მოთხრობები ისტორიიდამ, ამბები გეოგრაფიიდამ და ბუნების მეცნიერებიდამ; იგავები, ანდაზები, გამოცანები, შაირები, არით-მეტიკული გამოცანები; სათამაშოები, რებუსები, სიმღერები ნოტებით და სხვ.

დამატება—მშობელთა და აღმზრდელთათვის—დაიბეჭდება: ხედაგოგიური სტატიები მშობელთა და აღმზრდელთათვის შესახებ ყმაწვილების აღზრდისა და სწავლისა (პირველ-დაწყებითი). კრიტიკული და ბიბლიოგრაფიული სტატიები ხედაგოგიური თხზულებებისა. ხედაგოგიური ქრონიკა ჩვენი და უცხოეთის ცხოვრებიდამ. ნარევი. „ნობათი“-ს ფოსტა. განცხადებანი.

დამოუკიდებელი მონაწილეობა ჟურნალ „ნობათ“-სა აღუთქვეს და მიიღებენ: თ. აკ. წერეთელი, თ. რ. დ. ერისთავი, გ. ე. წერეთელი, თ. ნ. ჭ. დადიანი, ი. ბაქრაძე, ე. რ. გაბაშვილისა, ა. შ. ჭოჭნუბარიძე (ყაზბეგი) და სხვ.

ჟურნალზე ხელის-მოწერა.

ჟურნალი „ნობათი“ ქალაქს გარეშე გაგზავნით და ქალაქში დარიგებით წელიწადში ელირება ოთხი მანეთი. ცალკე ნომერი ათ, შაური. მარტო ხასუვარი წლის სელის-მოწერა არ მიიღება.

სოფლის მასწავლებელთ შეუძლიანთ გამოგზავნონ: თავ-და-პირველად—2 მან. და შემდეგ: მაისში—1 მან. და ენკენისთვეშიც—1 მან.

რომელთაც ამ რიგათ ხელის-მოწერა ჰსურთ, პირ-და-პირ რედაქციას უნდა მიმართონ.

ხელის-მოწერა მიიღება:

თბილისში—ჟურნალი „ნობათი“-ს რედაქციაში, ალექსანდროვის ბაღთან, ხაზინის ახლოს, თუმანიშვილის სახლ. № 7 და შავერდოვის წიგნის საცენტრში.

ჭუოაისში—ჭილაძეების წიგნის მაღაზიაში.

გორში—ეკ. ფურცელაძისას.

თელავში—ი. პ. როსტომაშვილთან.

ფოსტის ადრესი: *Тифлисъ, въ редакцію педагогическаго журнала „Нобати“.*

რედაქტორი-გამომცემელი ა. ს. დუდაძე.